

ԶԱՐԵՀ ՄԵԼՔՈՆԵԱՆ




ՈՐԾՆԱԿԱՆ



ԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԱՐԴԻ
ՀԱՅԵՐԷՆ
ԼԵԶՈՒԻ



Ա.ԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔ

ԶԱՐԵՀ ՄԵԼՔՈՆԵԱՆ

ԳՈՐԾՆԱԿԱՆ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ
ԱՐԴԻ ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ



ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔ

Մասնակի կամ ամբողջական
վերարտադրության ամեն իրատև
վերապահումով է հեղինակին:


ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ

1989

ՔԵՐԱԿԱՆ ՈՒԹԻՒՆ

ԴԱՍ 1

Բ Ա Ռ



ՀՐԱՀԱՆԳ 1.— Պատմեցէ՛ք վերի երկու նկարներուն պատմութիւնները:

1.— Երբ խօսինք կամ գրենք՝ կը գործածենք բառեր:

Օրինակ. երբ ըսենք՝ «Շնիկը փախաւ», գործածած կ'ըլլանք երկու հատ բառ, 1) Շնիկը, 2) փախաւ:

Երբ ըսենք՝ «Սոնիկին չար շնիկը ջուրը քափեց», գործածած կ'ըլլանք հինգ հատ բառ, 1) Սոնիկին, 2) չար, 3) շնիկը, 4) ջուրը, 5) քափեց:

ՀՐԱՀԱՆԳ 2.— Ըսէ՛ք երեքական հատ բառ:

ՀՐԱՀԱՆԳ 3.— Կարգացէ՛ք հետևեալ զրութիւնը եւ ըսէ՛ք թէ յանի՛ բառ կայ ամէն մէկ տողի վրայ: («Կըն», «չի»ն, «թող»ը առանձին բառ չեն. զանոնք կ'առնենք յաջորդ բառին հետ միասին: Օրինակ. «Կը հանդիպի» մէկ բառ է, «չի լսեր» մէկ բառ է):

ՆԻՆԻ ԳԱՌՆՈՒԿԸ ԵՒ ՊԱՐՈՆ ՑՐՈՒԻԶԸ



Առտու մը, նամբան, Նինի գառնուկը կը հանդիպի պարոն ցրուիչին, որ նամակներով լեցուն մեծ տոպրակ մը կոնակէն կախած՝ կ'երթար գառնո՛ք բաժնետու իրենց տէրերուն:

Երբ պարոն ցրուիչը կը հեռանայ քիչ մը, Նինի գառնուկը կը տեսնէ որ նամակ մը կ'իյնայ անոր տոպրակէն. կը սկսի կանչել. բայց պարոն ցրուիչը հեռո՛ւն է արդէն ու չի լսեր իր ձայնը:

Նինի գառնուկը կ'առնէ նամակը ու կը սկսի վազել պարոն ցրուիչին ետեւէն՝ անդադար պառալով:

Եւ այնքա՛ն արագ կը վազէ, որ վերջապէս՝ քրտնած ու հեւալով կը հասնի անոր հետիկին ետեւէն. կը յանձնէ նամակը: Պարոն ցրուիչը կը խնդայ ու կ'ըսէ. «Խեղճ Նինի, ի՞նչու յոգնեցար դուն. եթէ կարդայիր նամակին հասցէն՝ պիտի տեսնէիր թէ ան քեզի՛ կը պատկանի. այդ նամակը ես դիտմամբ նետեցի որ դուն առնե՛ս գայն...»:

ՀՐԱՀԱՆԳ 4.— Ձե՛ր բառերով պատմեցէ՛ք Նինիին պատմութիւնը՝ հետեւելով պատկերներուն:

ՀՐԱՀԱՆԳ 5.— Գտէ՛ք այն բառը որ հետեւեալ հանելուկին պատասխանն է:

Գետնէն ծնած կանաչ տակառ
Մէջը լեցուն ջուր ու շաքար:

ՀՐԱՀԱՆԳ 6.— Գտէ՛ք երեք հատ կարճ բառ, եւ երեք հատ երկար բառ: Օրինակ. 1) Ձի, օդ, մուկ, 2) Գրասեղան, դասարանայետ, աշակերտական:

ՀՐԱՀԱՆԳ 7.— Հետեւեալ բառերը դարձածեցէ՛ք մէկական խօսքի մէջ: Օրինակ. «Պուպրիկ», — «Բըրջո՛ւ պուպրիկը նոր է տակախ»:

Պուպրիկ, գնդակ, ծաղիկ, բարի, ասեղ, կը վազէր:

2. — Բառերը կը դրենք իրարմէ՛ քիչ մը հեռու:

Օրինակ. Ձենք դրենք՝ կատունտանիքէնիկնկաւ:
կը դրենք՝ կատուն տանիքէն ինկաւ:

ՀՐԱՀԱՆԳ 8.— Գտէ՛ք երկու բառերը եւ դասեցէ՛ք իրարմէ՛: Օրինակ. Ձեռքերսլուացի = Ձեռքերս լուացի:

Ձեռքերսլուացի, կատունտան, պատընեքիկեցին, սեղանաբոս, չամիչընկոյզ, շուշանիլիսակ, պնակաման, շնիկիշուկ, կըլորեքիայն, քաջանվախ:

ՀՐԱՀԱՆԳ 9.— Գտէ՛ք երեք բառերը եւ դասեցէ՛ք իրարմէ՛: Օրինակ. Շնիկըփախցուցըդակը = Շնիկը փախցուց գնդակը:

Շնիկըփախցուցըդակը, աղատըդրամուզեց, Տիրանդըպրոցգնաց, փիսիկմըունինք, կօշիկսեսներկեցի, տղաքրտանիքեղան, իրեննամակգրեցի:

ՀՐԱՀԱՆԳ 10.— Մէկական յսմար բառ զընդ զծիկներուն տեղ: Օրինակ. «Հացալործը — կ'եփէ» = «Հացալործը հաց կ'եփէ»:

Հացագործը — կ'եփէ: Գրավաճառէն — զմեցի: Ուսուցիչը կը բացատրէ —: Կրիան դանդաղաշարժ — մըն է: — կը բերէ մեր նամակները: — միս կը ծախէ: Աշխատասէր աշակերտը միշտ — իր դասերը: Նապաստակը ունի երկար —: Կաղամարիս մէջ — չկայ: Արեւը կը լուսաւորէ —: Պետրոս Գուրեան նշանաւոր — մըն է: Տարին ունի չորս —: Ես ապագային — այիտի ըլլամ: Կարկինը կը ծառայէ — գծելու: — 365 օր ունի: Ծիծեռնակները գաղթող — են: Մեր պարտէզին մէջ գունաւոր — կան: Այս որք տղան — չունի: Երկիրը կը դառնայ արեւին —: Լուսինը — երկրին շուրջ:

ՀՐԱՀԱՆԳ 11.— Գտէք այնպիսի երեք բառեր, որոնք թէ՛ առջեւէն եւ թէ՛ ետեւէն կարգացուելով նոյնը ըլլան: Օրինակ. «Մոմ»:

ՀՐԱՀԱՆԳ 12.— Հետեւեալ բառերէն իւրաքանչիւրը դործածեցէք միայն երեք բառ ունեցող խօսքի մը մէջ: Օրինակ. «Շնիկը» — Շնիկը թափեց ջուրը:

Շնիկը, դերձակը, ոստիկանները, վահրամ, հայրս, զընդակը:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. Խօսելու կամ գրելու ատեն ինչե՛ր կը գործածենք: Ինչո՛ւ բառերը կը գրենք իրարմէ քիչ մը հեռու:

ԳՐԱԽՈՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՀՐԱՀԱՆԳ 13.— Տետրակին մէջ ընդօրինակեցէք «Նինի Գառնուկը եւ Պարոն Յրուիչը» վրութեան առաջին հինգ տողերը: Յետոյ քանակով մէկական գծիկ քաշեցէք բառերուն տակ:

ԴԱՍ 2

Գ Ի Ր

3.— Բառերը կը դրենք գիրերով:

Օրինակ. «Ամիս» բառը ունի չորս զիր, — ա, մ, ի, ս, «օդ» բառը ունի երկու զիր, — օ, դ, «տետրակ» բառը ունի վեց զիր, — տ, ե, տ, ր, ա, կ:

ՀՐԱՀԱՆԳ 14.— Ըսէք թէ հետեւեալ բառերը քանիակա՛ն զիր ունին: Գիրերը դասեցէք գծիկներով: Օրինակ. «Աթոռ» — չորս զիր՝ ա-թ-ռ-ռ:

Աթոռ, գիրք, մկրատ, արեւ, չամիչ, մանկապարտէզ, տարի, է, ճի, կապիկ, դերձակ, գնդակ, օդ, ահա, ուռք, օշարակ, մէջք, դժգոհ, վագել, մեկնեցան:

ՀՐԱՀԱՆԳ 15.— Գտէք երկու զիր ունեցող երեք հատ բառ:

ՀՐԱՀԱՆԳ 16.— Գտէք չորս զիր ունեցող հինգ հատ բառ:

ՀՐԱՀԱՆԳ 17.— Գտէք հինգ զիր ունեցող հինգ հատ բառ:

ՀՐԱՀԱՆԳ 18.— Գտէք հետեւեալ գիրերով սկսող երկուքական բառ: Օրինակ. «Ա» — աղօթք, սպակի:

Ա, ե, գ, ժ, ի, լ, լս, ծ, կ, ճ, մ, ն, շ, ո, պ, ս, վ, տ:

**4.— (Մեր լեզուն ունի 38 գիր):
Իւրաքանչիւր զիր ունի իր անունը:**

Օրինակ. «տ» զիրին անունն է «այր»
«բ» զիրին անունն է «բէն»
«զ» զիրին անունն է «զիմ», եւ այլն:

5.— Ամէն դիր ունի իր գլխագիրը:
(Գլխագիրը՝ սովորական պարզ գիրքէն
քիչ մը տարբեր եւ խոշոր կ'ըլլայ):

Օրինակ. Պարզ գիր են առոնք՝ ա, բ, գ, դ, ե...
Անոնց գլխագիրներն են Ա, Բ, Գ, Դ, Ե...

Ահա հայերէն լեզուին այբուբենը

ԳԻՐԸ	ԱՆՈՒՆԸ	ԳԻՐԸ	ԱՆՈՒՆԸ
ա	Ա	այբ	Մ
բ	Բ	բեն	Յ
գ	Գ	գիմ	Ն
դ	Դ	դա	Շ
ե	Ե	եչ	Ո
զ	Զ	զա	Չ
է	Է	է	Պ
ը	Ը	ըթ	Ձ
ր	Ր	թօ	Ռ
ժ	Ժ	ժէ	Ս
ի	Ի	ինի	Վ
լ	Լ	լին	Տ
խ	Խ	խէ	Ր
ծ	Ծ	ծա	Ց
կ	Կ	կեն	Ի
հ	Հ	հօ	Փ
ձ	Ձ	ձա	Ք
ղ	Ղ	ղատ	Օ
ն	Ն	ճէ	Փ

ՀՐԱՀԱՆԳ 19.— Գոց ըսէք այբուբենին գիրերուն անունները
չարքով:

ՀՐԱՀԱՆԳ 20.— Այբուբենի կարգով շարեցէք հետեւեալ անունները:

Սուրէն, Յասմիկ, Գոհար, Դանիէլ, Վարուժան, Արամ, Քնար,
Զաւէն, Ժիրայր, Եղուարդ, Լեւոն, Շաֆէ, Նուպար, Պերն, Տիգրան:

ՀՐԱՀԱՆԳ 21.— Ըսէք թէ հետեւեալ գիրերէն որոնք պարզ
են եւ որոնք՝ գլխագիր:

Գ, ս, Ռ, տ, ր, բ, ե, Զ, գ, փ, Փ, ֆ, օ, Օ, Ք, վ, լ, Մ,
ն, Մ, դ, ա, ը, Ը, Ի, ն, մ, յ, Թ, Ք, Խ, ծ, կ, Կ, Զ, Պ:

ՀՐԱՀԱՆԳ 22.— Ըսէք հր. 21-ի գիրերուն անունները:

6.— Մեր 38 գիրերէն 7 հատը — ա, ե, է, ը, ի,
ո, օ, կը կոչուին անյնաւոր. մնացեալ 31 գիրերը
կը կոչուին բաղաձայն:

ՀՐԱՀԱՆԳ 23.— Զայնաւորները գոց ըսէք շարքով:

ՀՐԱՀԱՆԳ 24.— Գրատախտակին վրայ շարքով գոց գրեցէք
այբուբենին 38 գիրերը. յետոյ ընդդեմէք ձայնաւորները:

ՀՐԱՀԱՆԳ 25.— Զայնաւորներով սկսող մէկական բառ գը-
տէք: Օրինակ. Անիւ, Երկաթ, Էջ, Ընծայ, Իրաւ, Ռոս, Օրօրոց:

ՀՐԱՀԱՆԳ 26.— Ըսէք թէ հրահանգ 21-ի գիրերէն որոնք
ձայնաւոր են, եւ որոնք՝ բաղաձայն:

ՀՐԱՀԱՆԳ 27.— Մէկական ձայնաւոր դրէք գծիկներուն տեղ
եւ կազմեցէք բառեր: Օրինակ. ֆ-ս՝ ֆոս:

Փ-ս, մ-յր, վ-րֆ, չ-ր, մ-ջ, մ-ս, ն-ր, գ-մ, կ-ք, ք-րք,
պ-խ, մ-գ, ջ-դ, մ-մ, հ-տ, ք-մ, գ-ր, շ-շ:

ՀՐԱՀԱՆԳ 28.— Մէկական բաղաձայն դրէք գծիկներուն տեղ
եւ կազմեցէք բառեր: Օրինակ. Զու-՝ ջուր:

Ջու-, ցուր-, ածու-, աւա-, չամի-, մելա-, ա-, ալմո-,
գնդի-, մա-, ցե-, մու-, ծա-, աւե-, խնձո-:

ՀՐԱՀԱՆԳ 29.— Մէկական գիր դրէք գծիկներուն տեղ եւ կազ-
մեցէք բառեր: Օրինակ. Ա-ան՝ աման:

Ա-ան, կա-ին, մա-ուն, ա-եւ, դ-ալ, ք-չուն, ծ-դիկ:

ՀՐԱՀԱՆԳ 30.— Հետեւեալ բառերուն առջեւ մէկական բաղա-
ձայն աւելցուցէք եւ կազմեցէք նոր բառեր: Օրինակ. «էջ» — մէջ:
էջ, իր, եւ, ուշ, ախ, ափ, արդ, աջ, ափ:

ՀՐԱՀԱՆԳ 31.— Գտէք սլատասխանը հետեւեալ հանելուկին:

Առաջնորդն եմ ես գիրերուն աշխարհի,
Առանց-ինծի՝
«Ածուխ»ն է «ծուխ» միմիայն.
Ինձմով միայն «նուշ»ն է «անուշ»:

ՀՐԱՀԱՆԳ 32.— Առաջին նկարին մէջէն դտէք «ա», «ծ», «հ», «մ» եւ «կ» գիրերով սկսող երկուքական բան:



ՀՐԱՀԱՆԳ 33.— Երկրորդ նկարին մէջէն դտէք «ա», «կ» եւ «մ» գիրերով սկսող երկուքական բան:

ՀՐԱՀԱՆԳ 34.— Հետեւեալ գրութեան գծիկներուն տեղ դրէք յարմար բառեր՝ նայելով վերի առաջին նկարին:

Օր մը, ֆամբան, Թումիկ պապիկը կը հանդիպի տիկին Նունիկին. կը հանէ —ը որ բարեւ տայ տիկին —ին. եւ ահա երեսան կ'ելլէ — մը, որ նստած էր Թումիկ պապիկին ֆաղատ —ին ճիշդ մէջտեղը: Տիկին Նունիկ կը գ—, Թումիկ պապիկ շատ կ'ա—:

Այդ օրէն իվեր, ամէն անգամ որ — պապիկը ծանօթի մը — ֆամբան՝ հեռուէն մէջ մը կը հ— գլխարկը եւ կը քննէ մէջը՝ — տալէ առաջ:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ինչքնով կը գրեմք բառերը: Մեր լեզուն քանի՞ գիր ունի: Բանի՞ հատ են ձայնաւոր գիրերը: Բանի՞ հատ են բաղաձայն գիրերը: Բանի՞ գլխագիր կայ մեր այբուբենին մէջ:

ԳՐԱԻՈՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՀԱՆԳ 35.— Հետեւեալ բառերուն գիրերը զատեցէք գծիկներով. յետոյ ձայնաւոր գիրերուն տակ կարմիր գծիկ մը, եւ բաղաձայն գիրերուն տակ կապոյտ գծիկ մը քաշեցէք քանակով: — Դա-նակ, օձիք, աքոռ, երէկ, ընկեր, օդ:

ԴԱՍ 3

Կ Է Տ Ե Ր

7.— Որպէսզի մեր գրածը լաւ հասկցուի՝ կը գործածենք կէտեր: Կէտերն են ստորակէտը, բութը, միջակէտը, վերջակէտը, եւլն.:

Ա.— ՍՏՈՐԱԿԷՏ (,) կը գործածենք կարճ դադարի մը համար:

ՀՐԱՀԱՆԳ 36.— Ստորակէտ դրէք շեղադիր բառերուն միջև. եւ կարդացէք խօսքերը:

Ձին էջը ջորին ուղար ընտանի կենդանիներ են: Ես շատ կը սիրեմ նուշը կաղինը պիտտակը: Սուրիկը Վազգէնը Շողիկը Յարութը Մարօն մեզի եկան: Պահարանին մէջ շարէ՛ գիրքերդ տեղադրենք թուղթերդ: Ես երկուշարթի Չորեքշարթի Ուրբաթի եւ Երեքշարթի հօրս խանութը կ'երթամ: Երբեք սպորէլ յատքել խաղալ կ'ուզէ միշտ Ալիսին ֆայրիկը:

ՀՐԱՀԱՆԳ 37.— Ստորակէտ դրէք հետեւեալ խօսքերուն միջև եւ կարդացէք զոնոնք:

«Լուսինը երեցար պահ մը» «պապ պահուրտեցար ամպերուն ետին»: «Երէ լաւ աշխատէիր» «լաւ նիշեր կ'առնէիր»: «Պարտեզ գացիմք» «ծաղիկներ հաւաքեցիմք» «գեղեցիկ փունջեր կազմեցիմք»: «Ներայրս առաւ իր գիրքերը» «գանձմէ շարեց պայուսակլին մէջ» «գոցեց պայուսակը» «մեկնեցար դպրոց»: «Մայրը գրկեց իր գաւակը» «գայն սեղմեց կուրծքին» «համարուրեց քանի մը անգամ եւ յետո՛յ միայն նայեցար շուրջի մարդոց» «որոնք զի՛նք կը դիտէին»:

Բ.— ԲՈՒԹՅՈՒՆ (') ալ կը զնենք կարճ դադարի մը համար:

ՀՐԱՀԱՆԳ 38.— Բառի գրէք շեղադիր բառերուն միջև. եւ կարդացէք խօսքերը:

Չոհրապ քան կը խմէ, *ես օշարակ*: Անոնք դպրոց գացին, սկ *մենք տուն*: Դուն քաջ ես, *Միհրան վախկոտ*: Ժիրայր երկու ոյր ունի, *Վահրամ հինգ*: Արմէն գիս կը փնտռէր, *ես զինք*:

ՄԱՆՕԹՈՒԹԻՒՆ.— Կարդալու ատեն երբ հանդիպինք ստորակէտի մը կամ բուժի մը՝ մեր ձայնը կ'երկարենք քիչ մը:

Գ.— ՄԻՋԱԿԷՏ (.) կը դնենք՝

- 1) Զակերտէն («») առաջ: Օրինակ. *Ուսուցչուհին ըսաւ. «Դասդ լա՛ւ կարդացիր այսօր»*:
- 2) Կրճատուած բառերուն քով: Օրինակ. *Ս. Ծնունդ* (= Սուրբ Ծնունդ):

ՀՐԱՀԱՆԳ 39.— Միջակէտ դրէք ուր որ պէտք է:

Պարոն Տնօրէնը ըսաւ «Գոհ եմ ձեզմէ»: Պարոն Ս Աւետեանը հօրս բարեկամն է: Գիրքին Բ հատորը կարդացի՞ր: Պ Գուրեան մեռաւ քսան տարեկանին: Տղաքը կը պոռային «Մեզի հետ եկէ՛ք»: Մեր միութիւնը կը կառուի Հ Ա Տ Մ (Հայ Աշխատասէր Տղոց Միութիւն):

Դ.— ՎԵՐՋԱԿԷՏ (:) կը դնենք երբ խօսք մը կամ դրուծիւն մը վերջանայ: Օրինակ. *Վաչէն շատ աշխատասէր է*:

ՀՐԱՀԱՆԳ 40.— Մէկական փոքր խօսք կազմեցէք հետեւեալ բառերով. *խօսքերը գրեցէք դրատախտակին վրայ, եւ յետոյ մէկական վերջակէտ դրէք իւրաքանչիւրէն ետք*:

Արջուկ, ռետին, Սոնիկ, կը վագեմք, չհասկցաւ:


ՄԱՆՕԹՈՒԹԻՒՆ.— 1) Կարդալու ատեն երբ հանդիպինք միջակէտի մը կամ վերջակէտի մը՝ չենք երկարեր մեր ձայնը:

2) Միջակէտն ու վերջակէտը, երկուքն ալ ցոյց կու տան կտրուկ դադար մը. բայց վերջակէտին դադարը աւելի՛ երկար է:

3) Ստորակէտը, միջակէտը եւ վերջակէտը՝ չը դընենք զիծին վրայ. բուժը կը դնենք զիծէն բարձր՝ բառին վերջին գիրին վերեւը, քիչ մը դէպի աջ:

ՀՐԱՀԱՆԳ 41.— Բարձրաձայն կարդացէք «Սոնիկը» դրուծիւնը՝ ուշադրութիւն ընելով կէտերուն:

Ս Ո Ն Ի Կ Ը



Սոնիկը իմ դասընկերուիս եղաւ այս տարի: Շատ աշխատասէր, ազնիւ, կեկիկ ու ժպտուն աղջիկ մըն է: Միշտ ատենի՛ն կը հասնի դպրոց. դասարանին մէջ ուշադրութամբ կը հետեւի ուսուցչուհիին ըսածներուն. միշտ կը գիտնայ իր դասերը: Զբօսանքներուն անկիւն մը չի կենար. ընդհակառակը՝ կը մասնակցի խաղերուն, կը վագէ, կը ցատէ: Բոլորս կը սիրեմք զինք, ինք ալ՝ մեզ:

Տունը, երբ աւարտէ իր դասերը՝ կը ջանայ օգնել մայրիկին. յետոյ, կը գրագի ընթերցանութեան գիրքերով եւ կամ խաղալիկներով: Շատ կը սիրէ քոթատել պատկերազարդ գիրքեր: Յաճախ իրեն կ'ընկերանայ իրենց շար շնիկը՝ Թոքօն, որ երբեմն կը խառնէ ամէն բան, ու երբեմն ալ կ'օգնէ իրեն:

ՀՐԱՀԱՆԳ 42.— Ըսէք հետեւեալ կէտերուն անունները:

ՀՐԱՀԱՆԳ 43.— Գտէք թէ քանի՛ հատ ստորակէտ, բուժ, միջակէտ եւ վերջակէտ կայ «Սոնիկը» գրուծեան մէջ:

ՀՐԱՀԱՆԳ 44.— Ստորակէտ, միջակէտ, բուժ եւ վերջակէտ գրէք հետեւեալ բառերէն իւրաքանչիւրէն ետք. *գրեցէք դրատախտակին վրայ*: Օրինակ. *Հաց — հաց, հաց. հաց՝ հաց*:

Հաց, վագեց, մտամ, կօշիկ, իրեմք, Աշխէն:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ինչո՞ւ համար եմ կէտերը: Որո՞նք եմ կէտերը: Ե՛րբ կը գործածեմք զանոնք: Ո՞ր կէտերն են որ ձայնը կ'երկարեն:

ԳՐԱԽՈՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՀԱՆԳ 45.— Տեսարակին մէջ ընդօրինակեցէք «Սոնիկը» դրուծիւնը՝ ուշադրութիւն ընելով կէտերուն:

ԴԱՍ 4

Ն Շ Ա Ն Ն Ե Ր

Ց.— Որպէսզի մեր գրածը լաւ հասկցուի՝ կը գործածենք նաեւ նշաններ: Նշաններն են շեշտը, պարոյկը, երկարը, եւայլն:

Ա.— ՇԵՇՏ (') կը դնենք բառի մը վրայ՝ երբ ուզենք այդ բառը զօրաւոր հնչել: Օրինակ. «Ես ժիրա՛յրը կանչեցի, դո՛ւն ինչու եկար»:

Բ.— ՊԱՐՈՅԿ (°) կը դնենք բառի մը վրայ՝ երբ ուզենք այդ բառին իմաստը հարցական ընել: Օրինակ. «Պիտի վճարե՞»:

Գ.— ԵՐԿԱՐ (˘) կը դնենք բառի մը վրայ՝ երբ ուզենք այդ բառը երկար հնչել: Օրինակ. «Օ՛Փ, ձանձրացայ նստելէ»:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.— Շեշտը, պարոյկը, երկարը կը դնենք բառին վերջին ձայնաւորին վերեւը, քիչ մը դէպի աջ: Օրինակ. «Ան բնա՛ւ սուտ չի խօսիր», «Ան բնա՞ւ սուտ չի խօսիր», «Ան բնա՛ւ սուտ չի խօսիր»:

ՀՐԱՀԱՆԳ 46.— Կարգացէք հետեւեալները՝ ուշադրութիւն ընելով նշաններուն:

Գի՛րքը հոս բեր: Գիրքը հո՛ւս բեր: Ջո՞ւր խմեցին: Ջուր խըմեցի՞ն: Հասե՛ք, հասե՛ք, պիտի խեղդուի: Ի՞նք ըսաւ քեզի: Ինք ըսա՞ւ քեզի: Ինք քեզի՞ ըսաւ: Քրո՛ջդ բացատրէ: Քրոջդ բացատրէ՛: Բարե՛ւ, ի՛նչ կ'ընէք այս կողմերը: Ես ծո՛յլ եմ եղեր:

ՀՐԱՀԱՆԳ 47.— Շեշտ, պարոյկ եւ երկար գրէք հետեւեալ բառերէն իւրաքանչիւրին վրայ: Գրեցէք զրոտախտակին վրայ: Օրինակ. Մտա՛ւ, մտա՞ւ, մտա՛ւ:

Մտաւ, կը մտի, կը գրէր, հոս, մեմք, դում, այո, ոչ, երբեք, հարիւր, հասկցան, պիտի երգեն:



ՀՐԱՀԱՆԳ 48.— Կարգացէք վերի նկարին վեց «ա՛հ»երը՝ նըկարներո՛ւն համաձայն հնչելով զանոնք:

9.— Նշաններ են նաեւ չափերտը, գծիկը, փակագիծը, ապաքարցը:

Դ.— ԶԱԿԵՐՏ (« ») կը դնենք մէկու մը ըսած բառին կամ խօսքին առջեւն ու ետեւը: Օրինակ. Հայրիկս ըսաւ. «Այո՛»: Տղեկը պոռայ. «Շաքա՛ր կ'ուզեմ ես»:

Ե.— ԳԾԻԿ (—) կը դնենք տողին սկիզբը՝ հարց ու պատասխանի ատեն: Օրինակ.

- Տիգրա՛ն, Արմէնը տեսա՞ր այսօր:
- Այո՛, տեսայ, գրադարանը գիրք կը կարդար:

Զ.— ՓԱԿԱԳԻԾ () կը դնենք որպէս բացատրութիւն ըսուած բառերու կամ խօսքերու առջեւն ու ետեւը:

Է.— ԱՊԱԹԱՐՅ (') կը դնենք ջնջուած «ը» կամ «ի» գիրերուն տեղ: Օրինակ. Փոխանակ ըսելու «կը երթար» կ'ըսենք՝ «կ'երթար», (կը ջնջենք «կը»ին «ը» գիրը եւ տեղը ապաթարց մը կը դնենք): Փոխանակ ըսելու «չի երթար» կ'ըսենք՝ «չ'երթար», (կը ջնջենք «չի»ին «ի» գիրը եւ տեղը ապաթարց մը կը դնենք):

ՄԱՆՕԹՈՒԹԻՒՆ.— Պէտք է չփոթել ապաթարցը ստորակէտին հետ: Ստորակէտը կը գրուի գիծին վրայ (,), ապաթարցը կը գրուի գիծէն բարձր ('):

ՀՐԱՀԱՆԳ 49.— Ըսէք հետեւեալներուն անունները:

... : — () : ' ' ' , ' ' : — () « » ' , ' : . . .
... : — , ' ' ' ' ' : « » , ' ' ' ' ' , : ' ' , ' ' , ' ' :

ՀՐԱՀԱՆԳ 50.— Ձեռքէք «կը»երուն եւ «չի»երուն «ը» եւ «ի» գիրերը եւ անոնց տեղ դրէք մէկական ապաթարց: Օրինակ. «կը առնէր» = կ'առնէր, «չի առնէր» = չ'առնէր:

Կը առնէր, չի առնէր, կը ուտէ, չի ուտէր, կը աղօթես, կը արածէիմ, չի աղօթէր, չի այրիր, կը երգէք, կը որսան, չի որսար, չի ըսեր, կը ըսեմ:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ինչո՞ւ կը գործածենք մշանները: Որո՞նք են մշանները: Ե՛րբ ապաթարց կը դնենք:

ԳՐԱԴՈՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՀՐԱՀԱՆԳ 51.— Տետրակին մէջ ընդօրինակեցէք «ն/նի Գառնուկը եւ Պարոն Յրուիչը» զբուրեան վերջին մասը՝ սկսելով «Եւ» բառէն: Ուշադիր եզէք կէտերուն եւ նշաններուն:

ԴԱՍ 5

Գ Լ Խ Ա Գ Ի Ր

10.— (Որպէսզի բառ մը գլխադիրով սկսինք՝ պէտք է որ պատճառ մը ըլլայ): Ձեռք կրնար ո՛րեւէ բառ գլխադիրով սկսիլ:

ԳԼԽԱԳԻՐՈՎ ԿԸ ՍԿՍԻՆՔ

- 1) Վերնագիրի մը բառերը.
- 2) Գրութեան մը առաջին բառը.
- 3) Նոր-տողերու առաջին բառը.
- 4) Վերջակէտէն ետք եկող բառը.
- 5) Ոտանաւորներու բոլոր տողերուն առաջին բառերը.
- 6) Չակերտէն վերջ եկող առաջին բառը. *Օրինակ. Եղբայրս ըսաւ: «Աչքդ դոցէ, բերանդ բաց»:*
- 7) Մարդոց, կենդանիներու եւ տեղերու անունները. *Օրինակ. Սոնիկը եւ Թոթօն գացին Եւրոպա:*
- 8) Մակամունները. *Օրինակ. Լեւոն Աւետեան:*

ՀՐԱՀԱՆԳ 52.— Գոց ըսէք թէ ո՛ր բառերը գլխադիրով կը սկսինք:

ՀՐԱՀԱՆԳ 53.— Ըսէք թէ հետեւեալները մարդո՞ւ, կենդանի թէ տեղի անուն են. (տեղի անուն են՝ երկիրներու, քաղաքներու, թաղերու, ծովերու, դետերու, լիճերու, լեռներու անունները):

Վահէ, Հայաստան, Մասիս, Լիբանան, Թոթօ, Միմի, Անահիտ, Ովկիանիա, Սեւան, Նեղոս, Երեւան, Պէյրութ, Միջերկրական, Եփրատ, Վահան, Ափրիկէ, Արագած, Եղուարդ, Սուրիա, Նայմի:

ՀՐԱՀԱՆԳ 54.— Բոլոր աշակերտներն ալ կարգով թող գան դրատախտակ եւ տակ-տակի թող դրեն իրենց անունն ու մականունը:

ՀՐԱՀԱՆԳ 55.— Եթէ սխալ գլխագիրներ կան գրատախտակին վրայ գրուած անուններուն եւ մականուններուն մէջ՝ ցոյց տուէք զանոնք եւ սրբադրեցէք :

ՀՐԱՀԱՆԳ 56.— Մէկական անուն տուէք նկարին մէջի մարդերուն եւ կենդանիներուն . յետոյ պատմեցէք նկարին պատմութիւնը՝ դործածելով հետեւեալ բառերը, — Կը բուսնի, խոշոր, շոգ-գամ, չի կրնար, կը կանչէ, չեն կրնար, կը կանչեն... եւ վերջապէս...



ՀՐԱՀԱՆԳ 57.— Ամբողջացուցէք նկարին պատմութիւնը: Ըսէք թէ ի՞նչ կը պատահի՝ երբ կը փրթի չողգամը:

ՀՐԱՀԱՆԳ 58.— Կարդացէք «Նինի Գառնուկը եւ Պարոն Յըր-ւիչը» գրութիւնը եւ ըսէք թէ գլխագիրով սկսող բառերը ինչո՞ւ սկսած են գլխագիրով: Նոյնը ըրէք «Սոնիկը» գրութեան համար:

ՀՐԱՀԱՆԳ 59.— Գտէք հետեւեալ երկու հանելուկներուն պատասխանները: Յետոյ ըսէք թէ գլխագիրով սկսող բառերը ինչո՞ւ սկսած են գլխագիրով:

- | | |
|------------------|----------------------|
| Հագուած է ամռան, | Ջուրը իր մայրն է, |
| Ձմռան՝ է մերկ . | Հուրը իր հայրն է, |
| Մէկ ոտք ունի ան | Իսկ երկիւնքն անծայր՝ |
| Ու հագար ձեռք: | Իր սիրած վայրն է: |

ԳՐԱԻՈՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՀՐԱՀԱՆԳ 60.— «Շողգամ»ին մասին ձեր պատմած պատմութիւնը գրեցէք թուղթի մը վրայ: Կարդացէք չորս-հինգ անգամ, սրբադրեցէք եւ յետոյ լաջն ընդօրինակեցէք տետրակին մէջ: (Ուշադրութիւն ըրէք որ վեց տողէ աւելի չըլլայ):

ԴԱՍ 6

Վ Ա Ն Կ

Կան փոքր բառեր, որոնք կրնանք բերանի մէկ շարժումով (մէկ հնչումով) արտասանել: Օրինակ. Մատ, էջ, քուղթ, է:

Կան բառեր, որոնք կ'արտասանենք բերանի երկու շարժումով (երկու հնչումով): Օրինակ. Գի-շեր, Ա-րամ:

Կան բառեր, որոնք կ'արտասանենք երեք, չորս, հինգ (կամ աւելի) հնչումներով: Օրինակ. Կա-ղա-մար (= երեք հնչում), Ե-կե-ղե-ցի (= չորս հնչում, Ե-րա-ժշ-տու-թիւմ (= հինգ հնչում):

11.— Ինչ որ կ'արտասանենք մէկ հնչումով՝ կը կոչուի վանկ:

Օրինակ. «Ընկեր» բառը ունի երկու վանկ՝ որովհետեւ կ'արտասանուի երկու հնչումով — ըն-կեր:

«Ընկերասէր» բառը ունի չորս վանկ՝ որովհետեւ կ'արտասանուի չորս հնչումով — ըն-կե-րա-սէր:

«Սէր» բառը ունի մէկ վանկ՝ որովհետեւ կ'արտասանուի մէկ հնչումով — սէր:

ՅԱՆՕԹՈՒԹԻՒՆ.— Բառի մը վանկերը ճիշդ դատելու համար պէտք է այդ բառը արտասանել դանդաղօրէն եւ առանց ճիգի: Արդէն մենք բառերը կ'արտասանենք վանկ-վանկ:

ՀՐԱՀԱՆԳ 61.— Զատեցէք վանկերը հետեւեալ բառերուն: Օրինակ. Կիրակի = Կի-րա-կի:

Կիրակի, դասարան, ապակի, պուպրիկ, Իեկտեմբեր, գրնդակ, քոչուսներ, ամառնային, Օգոստոս, Հայաստան, իրիկուն, իշուկ, ընկոյզ, գիւղացի, երէկ, քաղաքացի, քահանայ, կառավարութիւն:

ՀՐԱՀԱՆԳ 62.— Կարգացէք «Սօնիկը» դրութիւնը եւ ըսէք թէ քանի վանկ ունի իւրաքանչիւր բառ :

ՀՐԱՀԱՆԳ 63.— Գտէք հինգ հատ մէկ վանկնոց բառ, յետոյ հինգ հատ երկու վանկնոց բառ, յետոյ հինգ հատ երեք վանկնոց բառ, յետոյ հինգ հատ չորս վանկնոց բառ, յետոյ հինգ հատ հինգ վանկնոց բառ :

ՀՐԱՀԱՆԳ 64.— Հետեւեալ երկու խումբերուն մէջէն իրարու յարմարող վանկերը միացուցէք եւ կազմեցէք երկու վանկնոց բառեր : Օրինակ . «Ա» եւ «ազ» = աւազ :

- Ա.— Ա, ար, մայ, կօ, գի, գն, տոմ, կա, խն :
- Բ.— Զուկ, լազ, շիկ, սակ, բիկ, ձոր, նի, դակ, տու :

ՀՐԱՀԱՆԳ 65.— Հետեւեալ երկու խումբերուն մէջէն իրարու յարմարողները միացուցէք եւ կազմեցէք երեք վանկնոց բառեր : Օրինակ . «Պա» եւ «տուհան» = պատուհան :


- Ա.— Պա, գա, դա, ե, գր, բա, շո, օ, մոխ :
- Բ.— Սարան, բօրոց, չատուփ, լագան, տուհան, կեղեցի, գեկառֆ, բաման, բեկամ :

ՀՐԱՀԱՆԳ 66.— Հետեւեալ երեք խումբերուն մէջէն իրարու յարմարող վանկերը միացուցէք եւ կազմեցէք երեք վանկնոց բառեր : Օրինակ . «Կօշ», «կա», «կար» = կօշկակար :

- Ա.— Կօշ, քա, գիւ, օ, վար, գն :
- Բ.— Ղա, դա, կա, հա, բա, դե :
- Գ.— Նայ, ցայց, ցի, նի . սեղ, կար :

ՀՐԱՀԱՆԳ 67.— Հետեւեալ դրութեան վանկերը միացնելով կազմեցէք բառերը եւ կարգացէք պատմութիւնը : Օրինակ . Նիւնի գառնուկին մայրը առտու մը կ'ըսէ Նիւնիին...

ՆԻՆԻՆ ԵՒ ԹՈՉՈՒՆՆԵՐԸ



Նի-նի-գառ-նու-կին-մայ-րը-առ-տու-մը-կ'ը-սէ-Նի-նի-ին . «Հինգ-վայր-կեան-կայ-դա-սի-գան-գա-կին-եւ-դու-նու-հոս-եւ-դե-ն-ա-նա-պա-րէ-ոք-հաս-նիս-դայ-րոց» :

Նի-նի-գառ-նու-կը-ան-մի-ջա-պէս-կ'առ-նէ-վ-գ-կա-պը , կը-փաթ-թէ-վի-գին , դայ-րո-ցա-կան-պա-յու-սա-կը-կը-կա-խէ-ու-սէն , կը-հագ-նի-ա-նի-ւով-կօ-շիկ-նե-րը-ու-կը-վա-զէ-դէ-պի-դայ-րոց :

Ժ-ա-մա-նա-կը-կ'անց-նի . նա-մ-բան-եր-կար-է , Նի-նի-գառ-նու-կը-պի-տի-ու-շա-նայ-ան-պատ-նառ : Յան-կարծ...

Եր-կու-թոշ-նիկ-ներ-կը-հաս-նին-օգ-նու-թեան : Կը-խած-նեն-Նի - նի-ին-վ-գ-կա-պին-ծայ - յե - յէ-ն-եւ-ա-րա-գօ-րէն-թ-ն-չե-լով՝ գայ-ն-կը-քա-նի-ն-ը-նե-տե-ւէն-մի-ն-չե-դայ-րոց . Նի-նի-ն-կը-սու-րայ-եւ-նի-շո-ա-տե-նի-ն-կը-հաս-նի-դայ-րոց :

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ի՞նչ է վանկը : Ի՞նչ կ'ընենք բառի մը վանկերը ճիշդ գտնելու համար :

ԳՐԱԽՈՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՀՐԱՀԱՆԳ 68.— Կարժիր ղծիկներով զատեցէք հետեւեալ բառերուն վանկերը . յետոյ զանոնք ընդօրինակեցէք տետրակին մէջ :

Դասարան , մօրաքոյր , գօտի , նաշաւեղան , բարեկամու-թիւն , երագ , շոգեմաւ , քերականութիւն , անմիջապէս , վիճակացոյց , մեղա :

ԴԱՍ 7

Տ Ո Ղ Ա Դ Ա Ր Ձ

Բառերը կը նմանին շղթաներու: Օրինակ. Երեք վանկ ունեցող բառ մը կը նմանի երեք օղակ ունեցող շղթայի մը. հինգ վանկ ունեցող բառ մը կը նմանի հինգ օղակ ունեցող շղթայի մը:

Իւրաքանչիւր վանկ օղակ մըն է:



բարեկամութիւն



իրիկուն



դէմ

Գրելու ստեղծումը հասնինք տողի մը վերջը, եւ տեղ չմնայ ամբողջ բառի մը համար՝ այդ բառին մէկ մասը կը դրենք յաջորդ տողին սկիզբը: Վերը մնացած մասին քով, զիծին վրայ՝ կը դնենք գծիկ մը (-): Օրինակ.

Այսօր դարձեալ անցայ ձեր թայէն: Մեծ մայրդ պատուհանէն խօսեցաւ հետս:

12.— Բառի մը մէկ մասը յաջորդ տողին սկիզբը գրել՝ կը նշանակէ այդ բառը տաղադարձել:

Տողադարձի ստեղծումը վանկերը (օղակները) կը դասենք իրարմէ. չենք կրնար վանկ մը (օղակ մը) կիսել:

Օրինակ. «Կապիկ» բառը, որ երկու վանկ ունի (կա-պիկ), տողադարձի ստեղծումը կ'ըլլայ կա-պիկ («կա» վերը, «պիկ» վարը):

ԵՐԿՈՒ վանկնոց բառ մը կարելի է տողադարձել միայն մէկ ձեւով՝ առաջին վանկը վերը, երկրորդ վանկը վարը: Օրինակ. «Նարինջ» բառը կ'ըլլայ նա-րինջ:

ԵՐԵՔ վանկնոց բառ մը կարելի է տողադարձել երկու ձեւով: Օրինակ. «Պատուհան» բառը տողադարձի ստեղծումը կ'ըլլայ կամ՝

1) Պա-տուհան (մէկ վանկը վերը, միւս երկուքը վարը) եւ կամ՝

2) Պատու-հան (երկու վանկերը վերը, մէկ վանկը վարը):

ՉՈՐՍ վանկնոց բառ մը կարելի է տողադարձել երեք ձեւով: Օրինակ. «Ըն-կե-րու-հի» բառը տողադարձի ստեղծումը կ'ըլլայ կամ՝

1) Ըն-կերուհի (մէկ վանկը վերը, միւս երեք վանկերը վարը) կամ՝

2) Ընկե-րուհի (երկու վանկ վերը, երկու վանկ վարը) կամ՝

3) Ընկերու-հի (երեք վանկ վերը, մէկ վանկ վարը):

ՀԻՆԳ վանկնոց բառ մը՝ կարելի է տողադարձել չորս ձեւով, վեց վանկնոց բառ մը՝ հինգ ձեւով, եւս յին, (միշտ մէկ պակասով):

Մէկ վանկնոց բառ մը կարելի է տողադարձել: Չայն կամ ամբողջութեամբ կը ձգենք վերը, եւ կամ ամբողջութեամբ կ'անցընենք յաջորդ տողին սկիզբը:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.— Երբ կա'յ տեղ՝ սէ'տք է տողադարձ ընել: Սխալ է՝ տող մը չլեցուած՝ յաջորդ տողին վրայ գրել:

ՀՐԱՀԱՆԳ 69.— Վանկերը դասեցէք հետեւեալ բառերուն: Իւրաքանչիւր բառի համար գծեցէք շղթայ մը եւ օղակներուն մէջ դրեցէք վանկերը:

Պսիւսաբան, օճառ, անձեռոց, մսավաճառ, բնկերասիրութիւն:

ՀՐԱՀԱՆԳ 70.— Գրատախտակին վրայ տողադարձեցէք հետեւեալ երկու վանկնոց բառերը:

Թաղար, սաւան, շողգամ, տերեւ, կօշիկ, փափուկ, հագնիլ:

ՀՐԱՀԱՆԳ 71.— Գրատախտակին վրայ տողադարձեցէք հետեւեալ երեք վանկնոց բառերը՝ երկուքական ձեւով: Օրինակ. «Թաշկինակ» — 1) Թաշկինակ, 2) Քաշկի-նակ:

Թաշկինակ, աղաման, վարդեմի, ապագայ, երեկոյ, սահեցան:

ՀՐԱՀԱՆԳ 72.— Գրատախտակին վրայ տողադարձեցէք հետեւեալ չորս վանկնոց բառերը՝ երեքական ձեւով: Օրինակ. «Արմենուհի» — 1) Արմենուհի, 2) Արմե-նուհի, 3) Արմեմու-հի:

Արմենուհի, շաքաթակամ, եկեղեցի, աշխատասէր, յարակեցաւ:

ՀՐԱՀԱՆԳ 73.— Ըսէք թէ հետեւեալ բառերէն որո՞նք կարելի չէ տողադարձել: Յետոյ ըսէք թէ մնացեալ բառերէն ամէն մէկը քանիակա՞ն ձեւով կարելի է տողադարձել:

Անճրեւ, օձ, լու, նաւակ, կամֆ, սիրտ, գինի, մայք, կարգ, չարութիւն, Անայիս, խօսք, դերձակուհի, տուփ:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ի՞նչ կը նշանակէ «տողադարձել»: Բառ մը քանի՞ ձեւով կարելի է տողադարձել: Ինչո՞ւ կարելի չէ տողադարձել մէկ վանկնոց բառերը:

ԳՐԱԻՈՐ ՊԱՐՑԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՀՐԱՀԱՆԳ 74.— Տետրակին մէջ տողադարձեցէք հետեւեալ բառերը՝ կարելի բոլոր ձեւերով:

Իրական, մամբրոդութիւն, աշխատասիրութիւն, ամոյշ:

ՀՈՄԱՆԻՇ ԵՒ ՀԱԿԱՆԻՇ ԲԱՌԵՐ

13.— Նոյն իմաստը ունեցող բառերը կը կոչուին հոմանիշ բառեր:

Օրինակ. Հոմանիշ են — «փոքր» եւ «պզտիկ», «վերջացընել» եւ «սւարտել»:

ՀՐԱՀԱՆԳ 75.— Գտէք թէ հետեւեալ երկու խումբերէն ո՞ր բառերը հոմանիշ են:

Ա.— Գոցել, սպասաւոր, քաջ, խրճիթ, հիւր, գործաւոր, քաղաքավար, քաց, դարձեալ, ուրախամալ:

Բ.— Հրմուիլ, արի, այցելու, փակել, ծառայ, հիւղ, խոնաւ, աշխատաւոր, նորէն, բարեկիրք:

ՀՐԱՀԱՆԳ 76.— Մէկական հոմանիշ գտէք հետեւեալ բառերուն: Օրինակ. «Տակաւին» = դեռ:

Տակաւին, դէմք, դիմացկուն, առջեւ, հաւաքել, մաքուր, բարկանալ, կտոր, կրակ, մագ, խելացի, նկար, փափաք:

ՀՐԱՀԱՆԳ 77.— Սորվեցէք հետեւեալ հոմանիշ բառերը:

Ուղի = ճամբայ, ճանապարհ. Ուշանալ = յապաղել. Ուրիշ = տարբեր. Չուան = սլարան. Չնչին = անարժէք, աննշան, անկարեւոր. Ծարաւ = պապակ. Վախ = սարսափ, ահ, սոսկում. Փափաք = իղձ, տենչ, ցանկութիւն, բազմանք. Ջիմջ = պայծառ, յստակ. Մագ = ծամ, հեր, վարս. Բարկութիւն = ցասում, զայրոյթ:

14.— Հակամիշ կը կոչուին այն բառերը, որոնք իրարու հակառակ իմաստ ունին:

Օրինակ. «Մեծ» եւ «փոքր», «կոկիկ» եւ «թափթփած»:



Մեծ փոքր



Կակիկ Թափփած

ՀՐԱՀԱՆԳ 78.— Գտէք թէ հետեւեալ երկու խումբերէն ո՛ր բառերը հականիչ են:

Ա.— Կակուզ, հարուստ, հաստ, լայն, նուրբ, երթալ, նոր, խելացի, չոր, ամառ, ուրախ:

Բ.— Բարակ, գալ, հին, խոնաւ, անխելք, կարծր, նեղ, կոշտ, աղքատ, տխուր, սմեռ:

ՀՐԱՀԱՆԳ 79.— Հականիչներ գտէք հետեւեալ բառերուն:

Շիտակ, փափուկ, աշխատասէր, կանուխ, վերջացնել, աբազ, պաղ, բարեկամ, բարձր, հեռուոր, ծանր, շահիլ:

ՀՐԱՀԱՆԳ 80.— Կարդացէք հետեւեալ դրութիւնը եւ շեղազիր բառերուն տեղ հականիչներ դրէք:

ՄԵՐ ԱՐԱՆ

Արան շատ աշխատասէր տղայ մըն է: Առաւօտուն կ'արթըն-
նայ կանուխ, արագօրէն կը պատրաստուի եւ դպրոց կը հասնի գան-
գակէն տասը վայրկեան առաջ: Շարքին մէջ կը կենայ շիտակ,
սանդուխներէն կը բարձրանայ կամայ: Գասարանին մէջ բարի է եւ
ուշազիր: Միշտ բարձր նիշեր կ'առնէ: Ուսուցիչները կը զօվեն
զինք:

ՀՐԱՀԱՆԳ 81.— Գտէք թէ հետեւեալ զոյգ բառերը իրարու
հոմանի՞չ են թէ հականիչ:

Սիրելի—ատել, մաքուր—աղտոտ, քշամի—հակառակորդ,
լոյս—խաւաք, քեռի—մօրեղբայր, ակոյալ—ատամ, հնագանդ—
հլու, գառիվեր—գառիվար, գագաթ—ստորոտ, այժ—ոչ, հար-
կաւ—անշուշտ, գեղեցիկ—տգեղ, մաքուր—անմաքուր, յաղթը-
ւիլ—յաղթել:

ՀՐԱՀԱՆԳ 82.— Գտէք թէ առաջին խումբին կենդանիները՝
երկրորդ խումբին ո՛ր կենդանիներուն ձաղերն են: Օրինակ. Հորթ =
Կովի ձագ:

Ա.— Հորթ, ֆուռակ, գառուկ, ուլ, փիսիկ, վառեակ, լա-
կոտ, մուն:

Բ.— Ոչխար, այծ, ճանճ, կով, էշ, շուն, հաւ, կատու:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ի՞նչ կը նշանակէ «հոմանիչ». Ի՞նչ կը նշանակէ «հակա-
նիչ»:

ԳՐԱԽՈՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՀՐԱՀԱՆԳ 83.— Գտէք մէ՛կ հոմանիչ եւ մէ՛կ հականիչ հե-
տեւեալ բառերէն իւրաքանչիւրին: Գրեցէք տետրակին մէջ: Օրին-
ակ. «Մեծ» — խոշոր, փոքր:

Մեծ, քաղցր, պարտուիլ, ասելուրիւն, յստակ, ներմակ:

ԴԱՍ 9

Բ Ա Յ

ՀՐԱՀԱՆԳ 84.— Կարգով գոց ըսէք հետեւեալները:

- | | |
|-------------------|--------------------|
| 1) ԵՍ կը վագ-եմ | 4) ՄԵՆՔ կը վագ-ենք |
| 2) ԴՈՒՆ կը վագ-ես | 5) ԴՈՒՔ կը վագ-էք |
| 3) ԱՆ կը վագ-է | 6) ԱՆՈՒՔ կը վագ-են |

ՀՐԱՀԱՆԳ 85.— Նախորդ հրահանգին օրինակով ըսէք հետեւեալ բառերը: Օրինակ. «Քալել» — Ես կը քալեմ, Դու կը քալես, եւայլն:

Քալել, գրել, կարել, դրկել, ծամել, պատրաստել:

ՀՐԱՀԱՆԳ 86.— Կարգով գոց ըսէք հետեւեալները:

- | | |
|------------------|-------------------|
| 1) ԵՍ կը մս-իմ | 4) ՄԵՆՔ կը մս-ինք |
| 2) ԴՈՒՆ կը մս-իս | 5) ԴՈՒՔ կը մս-իք |
| 4) ԱՆ կը մս-ի | 6) ԱՆՈՒՔ կը մս-ին |

ՀՐԱՀԱՆԳ 87.— Նախորդ հրահանգին օրինակով ըսէք հետեւեալ բառերը: Օրինակ «Ժպտիլ» — Ես կը ժպտիմ, Դու կը ժպտաս, եւայլն:

Ժպտիլ, մայիլ, խօսիլ, մարիլ, ծռիլ, պաղատիլ:


ՀՐԱՀԱՆԳ 88.— Կարգով գոց ըսէք հետեւեալները:

- | | |
|--------------------|---------------------|
| 1) ԵՍ կը կարդ-ամ | 4) ՄԵՆՔ կը կարդ-անք |
| 2) ԴՈՒՆ կը կարդ-աս | 5) ԴՈՒՔ կը կարդ-աք |
| 3) ԱՆ կը կարդ-այ | 6) ԱՆՈՒՔ կը կարդ-ան |

ՀՐԱՀԱՆԳ 89.— Նախորդ հրահանգին օրինակով ըսէք հետեւեալ բառերը: Օրինակ. «Հաղալ» — Ես կը հաղամ, Դու կը հաղաս, եւայլն:

Հաղալ, դողալ, լողալ, պռոալ, սողալ, խնդալ:

15.— Այն բառերը, որոնք բան մը բնել կամ բան մը ըլլալ ցոյց կու տան՝ կը կոչուին բայ:



Օրինակ.

«Ժիրայր ջուրը կը պարպէ» խօսքին մէջ՝ «կը պարպէ» բառը ցոյց կու տայ «բան մը ընել» — պարպել: Ուրեմն՝ «կը պարպէ» բառը բայ է:



«Ժիրայր յանկարծ ծառէն կ'իջնայ» խօսքին մէջ «կ'իջնայ» բառը ցոյց կու տայ «բան մը ըլլալ» — իջնալ: Ուրեմն՝ «կ'իջնայ» բառը բայ է:

ՀՐԱՀԱՆԳ 90.— Ըսէք թէ հետեւեալ բայերը ի՞նչ ընել կամ ի՞նչ ըլլալ ցոյց կու տան: Օրինակ. «Կը խմէր» բայը ցոյց կու տայ խմել, «մտեցայ» բայը ցոյց կու տայ մտիլ, «պիտի լողանք» բայը ցոյց կու տայ լողալ:

Կը խմեր, մտեցայ, պիտի լողանք, կ'աւլեր, կ'ուտէի, մաշեցան, մայեցէք, սողաց, պարտեցար, պիտի ուշանայի, կը պառկիս, կ'արթնայ, պիտի հաւաքէիմք, կը պարպէիք, լեցուց, կը բանայի, մարեցան, կը դեղնիլ, ըլլայի:

ՀՐԱՀԱՆԳ 91.— Գտէք թէ հետեւեալ բառերէն որո՞նք բայ են:

Օրինակ. «Կարդաց» — բայ է. բա՛ն մը ընել՝ «կարդալ» ցոյց կու տայ.

«Գիրցան» — բայ է. բա՛ն մը ըլլալ՝ «գիրնալ» ցոյց կու տայ.

«Գորգ» — բայ չէ. բան մը ընել կամ բան մը ըլլալ ցոյց չի տար:

Կարդաց, գիրցան, գորգ, կը խօսի, կը մտի, կը ստրեցաւ, կը փախչէր, տուփ, գրեց, գիր, պիտի հագաս, հիւանդ, հիւանդացան, բուժեց, իժիշկ, պիտի պազի, պազ, մեռան, ժպտեցայ, պիտի ըլլայ, կը խնդայ, պիտի յանդիմանուիս, գլուխ, կը լողանք, ջուր, ջրեցինք:

ՀՐԱՀԱՆԳ 92.— Մէկական յարմար բառ դրէք հետեւեալ բայերուն առջեւ: Օրինակ. «Կը հաջէ» — Շունը կը հաջէ:

Կը հաջէ, կը մլաւէ, կը սոգայ, կը կտկտայ, կը բառաչէ, կը նռուողէ, կը խրխնջէ, կը խօսի, կ'ոռնայ, կը մոնչէ:

ՀՐԱՀԱՆԳ 93.— Մէկական յարմար բառ դրէք հետեւեալ բայերուն առջեւ: Օրինակ. «Կը հաջեն» — Շուները կը հաջեն:

Կը հաջեն, կը մլաւեն, կը սոգան, կը կտկտան, կը բառաչեն, կը նռուողեն, կը խրխնջեն, կը խօսին, կ'ոռնան, կը մոնչեն:


ՀՐԱՀԱՆԳ 94.— Գծիկներուն տեղ դրէք հետեւեալ բայերէն ա՛յն որ կը յարմարի.— Կը վախնան, կը շինէ, բանտարկուեցան, կը սորվի, կ'ապրին, մեռան, կը տպէ, է, ինկաւ, կը բռնեն, պիտի ըլլայ, կ'երթայ, չէ:


Աշակերտը դաս —: Մեղուն մեղր —: Գոգերը —: Ծովին մէջ ձուկեր —: Տպագրիչը գիրքեր —: Հիւանդները —: Ճաննը աղտոտ միջատ մըն —: Եղբայրս ապագային օդանաւորդ —: Մըկնիկը քակարդին մէջ —: Կատուները մուկ —: Մուկերը — կատուներէն: Մայրս ամէն Կիրակի եկեղեցի —: Հուրիկը ծոյլ —:


ՀՐԱՀԱՆԳ 95.— Ըսէք հինգ հատ բայ:


ՀՐԱՀԱՆԳ 96.— Գտէք «ել», «իլ» եւ «ալ» գիրերով վերջացող երեքական հատ բայ:


ՀՐԱՀԱՆԳ 97.— Կարդացէք հետեւեալ գրութիւնը՝ պատկերներուն տեղ յնկրով անոնց ցոյց տուած բայը:


Աւերիկ ամէն ապու  կանուխ

անձիջապէս օժտուով ու պաղ ջուրով 

յէպոյ  առանց ճայրիկին յովնութիւն

տալու, և  դպրոց: Ի՞նչ, անբարոյութեան

տպէն  իր Բոլոր պարտականութիւնները:

Դրիկունը, ուրախ-կուարթ  տուն:

ՀՐԱՀԱՆԳ 98.— Հետեւեալներուն վրայ «ել», «իլ» կամ «ալ» աւելցուցէք եւ կազմեցէք բայեր: Օրինակ. «Կար» — կար-ել:

Կար, նայ, կարդ, որս, ամապար, նուագ, չափ, հալ, ըլլ:

- ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.—
- 1) «ել», «իլ» եւ «ալ» դիրերը կը կոչուին մասնիկ:
 - 2) Երբ բայի մը հետեւէն վերցնենք մասնիկը՝ մընացածը կը կոչուի արմատ: Օրինակ. «Վազել», վագ-ել. — «Վաղ» = արմատ, «ել» = մասնիկ:

ՀՐԱՀԱՆԳ 99.— Արմատները գտէք հետեւեալ բայերուն. հօսիլ, պարել, պատասխանել, սողալ, հաւաքել, պաղլիլ, պռալ:

ՀՐԱՀԱՆԳ 100.— Լուծեցէք հետեւեալ չորս հանելուկները.
յետոյ դտէք թայերը:

- 1) Կը բնակի անտառին մէջ,
հաւարին մէջ կը տեսնէ ան,
Կը քնանայ ցերեկ ատեն,
Գիշեր ատեն կը թռչի ան:
- 2) Ողջ չէ՝ սակայն կը լսէ,
Ու կը խօսի՝ երբ ուզէ.
Թէ պէտք ըլլայ՝ կը հնչէ,
Քեզ իր մօտը կը կանչէ:

3) Անոր պռչը հողին մէջ է,
Իսկ գլուխը ծովին մէջ է.
Կ'երթայ, կ'երթայ, անվերջ կ'երթայ,
Սակայն նոյն տեղն իր կը մնայ:

4) Կը թռչի բայց թռչումն չէ,
Փռքիկ է բայց մրջիւնն չէ,
Ինք կ'աշխատի օրն ի բուն,
Բերքը կու տայ մարդերուն:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ի՞նչ է բայը: Որո՞նք են բայերուն մասնիկները: Ինչպէ՛ս
կը գտնենք բայի մը արմատը:

ԳՐԱԽՈՐ ՊԱՐՑԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՀՐԱՀԱՆԳ 101.— Մէկական փոքր խօսք կազմեցէք հետեւեալ
բայերով ու գրեցէք տետրակին մէջ: Օրինակ. «Փախաւ», — Մըկ-
նիկը փախաւ թակարդէն:

Փախաւ, կը լուսաւորէ, պիտի գնեմ, չհասկցան, կ'ըլլայ:

ԴԱՍ 10

ԲԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ

16.— Երբ բայ մը ցոյց տայ հիմա կա-
տարուող բան մը՝ կ'ըսենք թէ այդ բայը ներ-
կայ ժամանակ է:

Օրինակ. Երբ ըսեմ «Կը կարգամ», կը նշանակէ՝ հիմա՛ կը
կարգամ: «Կը կարգամ» բայը ներկայ է:

17.— Երբ բայ մը ցոյց տայ անցեալին
կատարուած բան մը՝ կ'ըսենք թէ այդ բայը
Անցեալ ժամանակ է:

Օրինակ. Երբ ըսեմ «Կարդացի», կը նշանակէ՝ անցեալին
(այսինքն՝ քիչ առաջ, կամ երէկ, կամ աւելի՛ առաջ) կարդացի:
«Կարդացի» բայը Անցեալ է:

18.— Երբ բայ մը ցոյց տայ յետոյ կա-
տարուելիք բան մը՝ կ'ըսենք թէ այդ բայը
Ապառնի ժամանակ է:

Օրինակ. Երբ ըսեմ «Պիտի կարգամ», կը նշանակէ յետոյ՛ն
(այսինքն՝ քիչ ետք, կամ վաղը, կամ աւելի վերջը) պիտի կար-
գամ: «Պիտի կարգամ» բայը Ապառնի է:
(Ապառնի բայերը «պիտի» կ'ունենան իրենց առջեւը):

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.—

1) *Բայ մը կրնայ ըլլալ Ներկայ, Անցեալ, Ապառնի:*

2) *Բայերուն փոխուիլը (ալիսինքն՝ Ներկայ, Անցեալ, Ապառնի ըլլալը) կը կոչուի հռնարիում:*

ՀՐԱՀԱՆԳ 102.— Գտէք թէ հետեւեալ բայերը Անցեալ են թէ Ապառնի: Օրինակ. «խմեցի». ե՛րբ խմեցի՝ առաջ. «խմեցի» բայը Անցեալ է: «Պիտի խմենք». ե՛րբ պիտի խմենք՝ յետոյ. «պիտի խմենք» բայը Ապառնի է:

Խմեցի, պիտի խմենք, կը խօսէր, պիտի խաղամ, խօսեցան, կը գրէինք, փախար, պիտի երթայ, եղար, պիտի ըլլայիր, էի, գընաց, կը պատասխանէինք, պիտի հաւաքէ, չհաւաքեց, պիտի չմըտածեն:

ՀՐԱՀԱՆԳ 103.— Գծիկներուն տեղ դրէք մէկական. յարմար բայ:

Երբ հայրս տուն գայ՝ ես շատ —: Կաղանդին մայրս ինծի գնդակ մը —: Սիւլման ու Շողիկը երէկ մեզի —: Ընկերոջս բոլորը շատ գեղեցիկ ձայն մը —: Այսօր օդը ցուրտ —: Ռաֆֆիկը միշտ — իր մօրը ըսածներուն: Զկնորսները խոշոր ձուկեր —: Ալեքը ծառ —: Բաժակները ձեռքէս գետին —:

ՀՐԱՀԱՆԳ 104.— Գտէք հետեւեալ դրութեան բայերը: Յետոյ ըսէք թէ անոնք Ներկայ, Անցեալ թէ Ապառնի են:

ՆԻՆԻ ԳԱՌՆՈՒԿՆ ՈՒ ՓՇԻԿ ՈՋՆԻՆ

Օր մը, Նինի գառնուկին մայրը իրեն երեք հատ փուչիկ գընեց. Նինին շատ ուրախացաւ. ուռեցաւ գառնիկ, կապեց թելով ու գնաց Փշիկ ոգնիին քով: Անոնք յանա՛խ կը խաղային միասին: Նինին շատ կը սիրէր Փշիկը, որ բարի եւ խելացի ոգնի մըն էր:

- Փշիկը շատ ուրախացաւ երբ տեսաւ փուչիկները:
- Ի՛նչ պիտի ընենք այս փուչիկները, — ըսաւ Փշիկը:
- Իբարու պիտի նետենք եւ պիտի խաղանք, — պատասխանեց Նինին:

Խաղը սկսաւ: Նինին փուչիկը կը նետէր Փշիկին, որ իր պըզտիկ թաթիկներով կը հարուածէր գայն ու ետ կը դրկէր Նինիին:

Բայց յանկարծ փուչիկը դպաւ Փշիկին մարմինին եւ... պա՛մ, պայթեցաւ: Երկուքն ալ շատ վախցան: Ի՛նչ պիտի ընէին: Փշիկին մարմինը փուշեր ունէր: Պիտի չխաղայի՞նք...:

Նինին մտածեց ու գտաւ միջոցը:

— Հիմա կռնակիդ կակուղ բարձ մը կը կապենք. փուչիկը բարձին կը դպի եւ չի պայթիր, — ըսաւ:

Այդպէս ալ ըրին:



ՀՐԱՀԱՆԳ 105.— Հետեւեալ բայերէն «Ներկայ»ները վերածեցէք «Ապառնի»ի եւ «Ապառնի»ները՝ «Ներկայ»ի՝ «կը»երուն տեղ «պիտի» դնելով, եւ «պիտի»ներուն տեղ «կը»: Օրինակ. Կը վազեմ — պիտի վազեմ. պիտի խնդայ — կը խնդայ:

Կը վագեմ, պիտի խնդայ, պիտի յոգնիմք, կը գրեն, պիտի հագնիմք, կը շարես, կը դիտեմ, պիտի լսէք, կը խնդրեն, կը բարկանայ, պիտի լողայ:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Քանի՞ ծախանակ ունին բայերը: Բայ մը ե՛րբ Ներկայ է, ե՛րբ Անցեալ է, ե՛րբ Ապառնի է: Ի՛նչ է խոնարհումը:

ԳՐԱՆՈՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՀԱՆԳ 106.— Հետեւեալ զոյւ բառերով միմիայն հինգ բառ ունեցող մէկական խօսք կազմեցէք: Օրինակ. «կը սիրեմ — մայրս». Ես շատ կը սիրեմ իմ մայրս: (Յետոյ ըսէք թէ բայերը Ներկայ, Անցեալ թէ Ապառնի են):

Կը սիրեմ—մայրս: Արեւը—ձագեցաւ: Մարդ—պիտի ըլլայ: Փուչիկները—պայթեցան: Աշակերտները—կը պտըտէին:

ԴԱՍ 11

ԲԱՅԻՆ ԽՈՆԱՐ ՀՈՒՄԸ

ՀՐԱՀԱՆԳ 107.— Գոց սորվեցէք «Վազել» բային խոնարհումը:

«Վ Ա Ջ Ե Լ» Բ Ա Յ

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

ՆԵՐԿԱՅ

	Եզակի		Յոգնակի
(Ես)	կը վագ-եմ	(Մենք)	կը վագ-ենք
(դուն)	կը վագ-ես	(դուք)	կը վագ-էք
(ան)	կը վագ-է	(անոնք)	կը վագ-են

Ամկատար ԱՆՅԵԱԼ

(Ես)	կը վագ-էի	(Մենք)	կը վագ-էինք
(դուն)	կը վագ-էիր	(դուք)	կը վագ-էիք
(ան)	կը վագ-էր	(անոնք)	կը վագ-էին

Կատարեալ ԱՆՅԵԱԼ

(Ես)	վագ-եցի	(Մենք)	վագ-եցինք
(դուն)	վագ-եցիր	(դուք)	վագ-եցիք
(ան)	վագ-եց	(անոնք)	վագ-եցին

Բացարձակ ԱՊԱՌՆԻ

(Ես)	պիտի վագ-եմ	(Մենք)	պիտի վագ-ենք
(դուն)	պիտի վագ-ես	(դուք)	պիտի վագ-էք
(ան)	պիտի վագ-է	(անոնք)	պիտի վագ-են

Անկատար ԱՊԱՌՆԻ

(Ես)	պիտի վագ-էի	(Մենք)	պիտի վագ-էինք
(դուն)	պիտի վագ-էիր	(դուք)	պիտի վագ-էիք
(ան)	պիտի վագ-էր	(անոնք)	պիտի վագ-էին

ՀՐԱՄՍՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

ՆԵՐԿԱՅ

(Գուհ)	վագ-է'	(Գուհք)	վագ-եցէ'ք
--------	--------	---------	-----------

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ (*)

ՆԵՐԿԱՅ

(Ես)	վագ-եմ	(Մենք)	վագ-ենք
(դուն)	վագ-ես	(դուք)	վագ-էք
(ան)	վագ-է	(անոնք)	վագ-են

ԱՆԿԱՏԱՐ

(Ես)	վագ-էի	(Մենք)	վագ-էինք
(դուն)	վագ-էիր	(դուք)	վագ-էիք
(ան)	վագ-էր	(անոնք)	վագ-էին

ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

ՆԵՐԿԱՅ

(Ես)	թող վագ-եմ	(Մենք)	թող վագ-ենք
(դուն)	թող վագ-ես	(դուք)	թող վագ-էք
(ան)	թող վագ-է	(անոնք)	թող վագ-են

ԱՆԿԱՏԱՐ

(Ես)	թող վագ-էի	(Մենք)	թող վագ-էինք
(դուն)	թող վագ-էիր	(դուք)	թող վագ-էիք
(ան)	թող վագ-էր	(անոնք)	թող վագ-էին

(*) Կարելի է, ի հարկին, Ստորադասական, Ըղձական եւ Անորոշ եղանակները բնաւ չսորվեցնել: Հրահանգները ըստ այնմ պատրաստուած են:

ԱՆՈՐՈՇ ԵՂԱՆԱԿ

ԱՆԵՐԵՒՈՅԹ	վազ-եղ
ՆԵՐԿԱՅ ԸՆԴՈՒՆՆԵԼՈՒԹԻՒՆ	վազ-ող
ԱՆՑԵԱԿ ԸՆԴՈՒՆՆԵԼՈՒԹԻՒՆ	վազ-ած, վազ-եր
ԱՊԱՌՆԻ ԸՆԴՈՒՆՆԵԼՈՒԹԻՒՆ	վազ-ելիք, վազ-ելու

ՀՐԱՀԱՆԳ 109.— Խոնարհեցէք քաղիլ, դրկիլ եւ պատասխանիլ բայերը՝ «վազել» բային օրինակով:

ՀՐԱՀԱՆԳ 110.— Ըսէք ցատիկ, գրիլ եւ մտածիլ բայերուն Սահմանական Ներկան եւ Բացարձակ Ապառնին:

ՀՐԱՀԱՆԳ 111.— Ըսէք նախորդ հրահանգին բայերուն Սահմանական Անկատար Անցեալը եւ Անկատար Ապառնին:

ՀՐԱՀԱՆԳ 112.— Գրատախտակին վրայ տակ-տակի դոց գըրեցէք այն մասնիկները, որոնք աւելցուած են «վազել» բային արմատին վրայ՝ Սահմանական Ներկային մէջ: Յետոյ գրեցէք այն մասնիկները, որոնք աւելցուած են Անկատար Անցեալին մէջ: Յետոյ գրեցէք այն մասնիկները, որոնք աւելցուած են Կատարեալ Անցեալին մէջ:

ՀՐԱՀԱՆԳ 113.— Գրատախտակին վրայ գրեցէք Հրամայականները հետեւեալ բայերուն: Օրինակ. «Ձգել» — Ձգ-է', ձգ-եցէ'ք:

Ձգել, հաւաքել, յիշել, խաշել, կանչել, շարունակել:

ՀՐԱՀԱՆԳ 114.— Գտէք Աներեւոյթը հետեւեալ բայերուն. (Աներեւոյթը «ել», «իլ»-կամ «ալ» մասնիկները կ'ունենայ): Օրինակ. «Կը շտկէի» — շտկիլ, «մսեցան» — մսիլ:

Կը շտկէի, մսեցան, պիտի դրկեմ, կը կարդանք, կը շուարէիք, կ'աճապարեմ, թող խնդայ, հասկնայի, խորհեցանք:

ՀՐԱՀԱՆԳ 115.— Գտէք թէ հետեւեալ բայերը Անցեալ Անկատար են թէ Անցեալ Կատարեալ:

Կը շարէի, շարեցի, կը վազեիմք, կը դրկեր, դրկեցիմք, գրեց, կը գրէիք, ընդօրինակեցիմք, կը պարէիմք, կապեցիր, կ'ուզեր, ուզեց:

ՀՐԱՀԱՆԳ 116.— Գտէք թէ հետեւեալ բայերը Ներկա՞ր են թէ Անկատար Անցեալ:

Կը շարէր, կը շարէ, կը կարեմ, կը կարէի, կը վազեիմք, կը վազեցիք, կը լսես, կը լսէիմ, կը գծէք, կը պատմէիր, կ'երգեիմք, կ'ուտեմ:

ՀՐԱՀԱՆԳ 117.— Նկարներուն պատմութիւնը պատմեցէք՝ պատասխանելով հետեւեալ հարցումներուն.

1) Սուրիկ ի՞նչ չ'ուզեր ընել: Ի՞նչ կ'ընէ մայրը: 2) Ի՞նչ կայ ներսը. ի՞նչ կ'ընէ Սուրիկ ներսը: 3) Ի՞նչն'ու կու լայ Սուրիկ. ի՞նչ ընել չ'ուզեր:



ԳՐԱՆՈՐ ՊԱՐՑՍԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՀՐԱՀԱՆԳ 118.— Նկարներուն պատմութիւնը գրեցէք թուղթի մը վրայ. սրբալրեցէք եւ ընդօրինակեցէք տետրակին մէջ: Յետոյ մէկական զիծ քաշեցէք բայերուն տակէն: (Ուշադիր եղէք որ չորս-հինգ տողէն աւելի չըլլայ ձեր գրածը):

Բ Ա Յ Ի Ն Դ Է Մ Ք Ը

19.— Կ'ըսենք թէ բայ մը երեք «դէմք» ունի:

Առաջին դէմք է այն բայը, որուն առջեւ կրնանք «ես» կամ «մենք» դնել:

Օրինակ. «Վազեցի» բային առջեւ կրնանք «ես» բառը դնել եւ ըսել՝ «ես վազեցի»: «Վազեցի» բայը Առաջին դէմք է:

«Վազեցինք» բային առջեւ կրնանք «մենք» բառը դնել եւ ըսել՝ «մենք վազեցինք»: «Վազեցինք» բայը Առաջին դէմք է:

20.— Երկրորդ դէմք է այն բայը, որուն առջեւ կրնանք «դու» կամ «դուք» դնել:

Օրինակ. «Վազեցիր» բային առջեւ կրնանք «դու» բառը դնել եւ ըսել՝ «դու վազեցիր»: «Վազեցիր» բայը երկրորդ դէմք է:

«Վազեցիք» բային առջեւ կրնանք «դուք» բայը դնել եւ ըսել՝ «դուք վազեցիք»: «Վազեցիք» բայը երկրորդ դէմք է:

21.— Երրորդ դէմք է այն բայը, որուն առջեւ կրնանք «ան» կամ «անոնք» դնել:

Օրինակ. «Վազեց» բային առջեւ կրնանք «ան» բառը դնել եւ ըսել՝ «ան վազեց»: «Վազեց» բայը երրորդ դէմք է:

«Վազեցին» բային առջեւ կրնանք «անոնք» բառը դնել եւ ըսել՝ «անոնք վազեցին»: «Վազեցին» բայը երրորդ դէմք է:

ՀՐԱՀԱՆԳ 119.— Ըսէք թէ հետեւեալ բայերուն առջեւ «ե՞ս», «դո՞ւ», «ան», «մե՞նք», «դուք», թէ «անոնք» կրնանք դնել:

Փոքից, կը խմեմ, պիտի նկարէր, թող ուտեմ, եղաւ, կ'ըսէք, պիտի ծախսէին, կոտորեցիք, բարկացան, կը շնչէի, հասանք, կ'ուզեմ, թող չերթայ, խօսեցար, կը վախնամ, կը պոռայ, կերեր է, կը լսէք, ըլլայի, է:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.—

1) Առաջին դէմք է ան, որ կը խօսի, այսինքն՝ ես եւ մենք:

Երկրորդ դէմք է ան, որուն հետ կը խօսինք, այսինքն՝ դու եւ դուք:

Երրորդ դէմք է ան, որուն մասին կը խօսինք, այսինքն՝ ան եւ անոնք:

2) «Ան» եւ «անոնք» ըսելու տեղ կրնանք նաեւ ըսել՝ «ինք» եւ «իրենք»:

3) Այս ութ բառերը՝ ես—մենք, դու—դուք, ան—անոնք եւ ինք—իրենք, կը կոչուին Գերանուն:

ՀՐԱՀԱՆԳ 120.— Գոց ըսէք վերի ութ գերանունները, եւ սորվեցէք անոնց ուղղագրութիւնը:

ՀՐԱՀԱՆԳ 121.— Ըսէք դէմքը հետեւեալ գերանուններուն (այսինքն առաջի՞ն, երկրորդ թէ երրորդ դէմք ըլլալը):

Ան, անոնք, ես, մենք, դու, դուք, ինք, իրենք, ես, ինք, ան, դու, մենք, դուք, անոնք, ես, իրենք, ան, դուք, անոնք, մենք, դու, ես, մենք, իրենք, անոնք, ան, ինք, դու, ես, ան, դուք, մենք, ես, ինք, մենք, դու:

ՀՐԱՀԱՆԳ 122.— Գտէք հետեւեալ բայերուն դէմքը: Օրինակ. «Մեկնեցաւ» բային առջեւ կրնանք դնել «ան» բառը եւ ըսել՝ «ան մեկնեցաւ»: «Ան»ը երրորդ դէմք է, ուրեմն «մեկնեցաւ» բայն ալ երրորդ դէմք է:

Մեկնեցաւ, կը կարծեմ, շահեցաք, պիտի նուիրեմ, հեռացան, մեռաւ, կը խորհէիր, փախանք, քոյ երթայ, կը ծախեն, պիտի ըլլայ, էիմք, կ'ուզես, կ'ըլլան, չտեսայ, մեկնեցանք, ծախսեցիր, կը բերէք, չեղանք, վագեցէ՛ք, երգեցիք, հասկցաւ, կը պարտին, կ'ուզէ՞ք, ըլլայի՛ք, չտեսաւ, եմք, կը ներկէի, կը պարեմ, կը ծափահարէք, էին, խօսի՛ր, քոյ պատրաստեն:

ՀՐԱՀԱՆԳ 123.— Ամբողջացուցէք հետեւեալ բայերը՝ անոնց առջեւ դրուած դերանուններուն համաձայն: Օրինակ. Դուն վագ— կ'ըլլայ դուն վագ-եցիր:

Դուն վագ—, ան գր—, մեմք երգ—, անոնք կը խնդ—, ան խօս—, ան կը խօս—, դուք կը վագ—, ես պիտի երթ—, մեմք պիտի երթ—, ինք կը կարծ—, իրենք կը կարծ—, ան պիտի շահ—, դուն կը հաւաք—, անոնք կ'երգ—, ես շահ—, դուք պիտի շահ—, ինք պիտի յաջող—, մեմք կը լող—, ան գծ—, անոնք գծ—, իրենք պիտի մեկն—, անոնք չափ—, ես կը խնդ—, դուն կը դող—, մեմք նայ—, դուն պիտի ըլլ—, անոնք եղ—:

ՀՐԱՀԱՆԳ 124.— Ըսէք նախորդ հրահանգին բայերուն դէմքը:

ԳՐԱԽՈՐ ՊԱՐՑԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՀՐԱՀԱՆԳ 125.— Գտէք հետեւեալ բայերուն ժամանակը եւ Դէմքը: Օրինակ. «Կը հաւաքէք» = Անցեալ Անկատար, երրորդ դէմք:

Կը հաւաքէք, սաշեցի, կը բացատրեն, պիտի ցառփես, կը մտածէք, յանդիմանեցիմք, կը նկարէիր, պիտի երագէին, կը ներկէք:

Բ Ա Յ Ի Ն Թ Ի Ի Ը

22.— Երբ բառ մը մէկ հատ բան ցոյց տայ՝ կ'ըսենք թէ եզակի է:
Երբ բառ մը մէկէ աւելի բան ցոյց տայ՝ կ'ըսենք թէ յոգնակի է:

Օրինակ. «Ես», «դուն», «ան», («ինք») բառերը եզակի են, որովհետեւ «ես» մէկ հատ եմ, «դուն» մէկ հատ ես, «ան» մէկ հատ է: Բայց՝

«Մենք», «դուք», «անոնք», («իրենք») բառերը յոգնակի են, որովհետեւ «մենք» մէկէ աւելի ենք, «դուք» մէկէ աւելի էք, «անոնք» մէկէ աւելի են:

23.— Այն բայը, որուն առջեւ կրնանք ես, դուն, ան կամ ինք դնել՝ եզակի է:
Այն բայը, որուն առջեւ կրնանք մեմք, դուք, անոնք կամ իրենք դնել՝ յոգնակի է:

Օրինակ. «Կը պարէ» բայը եզակի է՝ որովհետեւ կրնանք «ան կը պարէ» ըսել. «ան» մէկ հատ է:

«Կը պարեն» բայը յոգնակի է՝ որովհետեւ կրնանք «անոնք կը պարեն» ըսել. «անոնք» մէկէ աւելի են:



Ան կը պարէ (եզակի)



Անոնք կը պարեն (յոզնակի)

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.—

1) «Ես»ին յոզնակին է «մենք», «դուն»ին յոզնակին է «դուք», «ան»ին յոզնակին է «անոնք», «ինք»ին յոզնակին է «իրենք»:

2) Բայի մը թիւը իր եզակի կամ յոզնակի ըլլալն է:

3) Բայի մը Դէմքն ու Թիւը գտնելու համար՝ առջեւը կը դնենք իրեն յարմար Դերանուն մը. այդ Դերանունը ինչ Դէմք եւ Թիւ որ ունի՝ բայն ալ կ'ուսնայ նոյն Դէմքն ու Թիւը:

Օրինակ. Երբ ըսեմ «կանչեցիր», կը նշանակէ «դուն կանչեցիր». եւ քանի որ «դուն»ը Երկրորդ դէմք է եւ Եզակի է՝ «կանչեցիր» բայն ալ Երկրորդ դէմք է եւ Եզակի է:

Երբ ըսեմ «կանչեցինք», կը նշանակէ «մենք կանչեցինք». եւ քանի որ «մենք»ը Առաջին դէմք է եւ Յոզնակի է՝ «կանչեցինք» բայն ալ Առաջին դէմք է եւ Յոզնակի է:

ՀՐԱՀԱՆԳ 126.— Գտէք հետեւեալ բայերուն թիւը (այսինքն՝ եզակի՞ թէ յոզնակի ըլլալը): Օրինակ. «Սահեցան» բայը կ'ըլլայ «անոնք սահեցան». «անոնք» բառը յոզնակի է. ուրեմն յոզնակի է նաեւ «սահեցան» բայը:

Սահեցան, կը ներկեր, պիտի փայլիք, պիտի հագնիք, կը մաշի, կը հրէք, բացատրեցին, քաղցրեցին, կատրեցաւ, թող հսկեն, կարգադրեցի, բարկացար, պիտի ուտեն, ժպտեցար, մտածեց, չորացաւ:

ՀՐԱՀԱՆԳ 127.— Գտէք դէմքն ու թիւը հետեւեալ բայերուն: Օրինակ. «Կը խօսէինք» բայը կ'ըլլայ «մենք կը խօսէինք». «մենք»ը Առաջին դէմք է եւ Յոզնակի է, ուրեմն «կը խօսէինք» բայն ալ Առաջին դէմք է եւ Յոզնակի է:

Կը խօսէինք, շինեցի, կը կլլեմ, նայեցան, թող մտնեն, պիտի հասկնաս, կ'օրօրէի, պիտի չհաւաքեմ, տպեցիք, կ'երագէինք, կը շփոթիս, պիտի հագնիք, կը շատախօսեն, ընդօրինակեց, թող չթափէր, եղան, էիր, թարգմանեցէ՛ք, կ'ուզեմք, պիտի չըլլաս:

ՀՐԱՀԱՆԳ 128.— Հետեւեալ բայերը եզակի են. ըսէք անոնց յոզնակին: Օրինակ. «Ես կը կապեմ» — մենք կը կապենք:

Ես կը կապեմ, դուն առաջնորդեցիր, ան շարեց, ան պիտի ուտէ, դուն երգեցիր, ան թող երգէր, ես էի, ես ըլլամ, դուն կը ծամես, ան կլլեց, ան պիտի ծախէր, ես կը մաքրեմ, ան թող չպահէ, ես չունիմ:

ՀՐԱՀԱՆԳ 129.— Հետեւեալ բայերը յոզնակի են. ըսէք անոնց եզակին: Օրինակ. «Մենք գոցեցինք» — ես գոցեցի:

Մենք գոցեցինք, անոնք կ'արդուկեն, մենք պիտի նուազենք, դուք գծեցիք, դուք կը խմէք, իրենք շահեցան, մենք ահապարեցինք, անոնք հանեցին, դուք պիտի ուրախամաք, մենք չհաւատացինք:

ՀՐԱՀԱՆԳ 130.— Կարդով ըսէք հետեւեալ բայերուն 1) Անբերեոյթը, 2) Ժամանակը, 3) Դէմքը եւ 4) Թիւը: Օրինակ. «Ան կը դումարէր» = 1) Գումարել, 2) Անկատար Անցեալ, 3) Երրորդ դէմք, 4) Եզակի:

Ան կը գումարէր, ես պիտի թափէի, դուք կը համրէք, դուք համրեցիք, անոնք կը գումարեն, մենք թափեցինք, ինք կը խընդրէր, ան պիտի խնդրէ, մենք կը ժողվէինք, ան թափեց, ես կը կարծեմ, դուն կը վագէիր:

ՀՐԱՀԱՆԳ 131.— Պատմեցէք նկարներուն պատմութիւնը՝ պատասխանելով հետեւեալ հարցումներուն. 1) Նինին ինչ ունէր ձախ ձեռքին, 2) Ինչ ունէր աջ ձեռքին, 3) Ո՛ւր կ'երթար, 4) Ինչ մը կը տեսնէ, 5) Ինչո՛ւ կը փախչէր Բագիկը, 6) Ինչպէ՛ս կ'ազատէր զայն:



ՀՐԱՀԱՆԳ 132.— Խոնարհեցէք հետեւեալ խօսքերուն բայերը՝ խօսքերը ամբողջութեամբ կրկնելով վեցական անգամ :

Օրինակ . Ես գրեցի իմ բոլոր դասերս .

Դուն գրեցիր քու բոլոր դասերդ .

Ան գրեց իր բոլոր դասերը (եւայլն) .

Ես գրեցի իմ բոլոր դասերս : Ես կը սիրեմ իմ ծնողքս : Ես միշտ կը մաքրէի իմ կօշիկներս : Ես ամառը ապէս պիտի պատրաստեմ իմ պարտականութիւններս :

ՀԱՐՑՈՒՄՆԻՐ.— Քանի՛ դէմք ունի բայ մը . ինչպէ՛ս կը գտնենք բայի մը դէմքն ու թիւը :

ԴՐԱՒՈՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՀՐԱՀԱՆԳ 133.— Կարդով գրեցէք հետեւեալ բայերուն 1) Աներեւոյթը, 2) Ժամանակը, 3) Դէմքը եւ 4) Թիւը : Օրինակ . «Շարեցին» = 1) Շարել, 2) Կատարեալ Անցեալ, 3) Երրորդ դէմք, 4) Յոգնակի :

Շարեցին, կը պարես, պիտի տարածէի, կը կարծեն, համբեց, պիտի գծէք, շտկեցինք, կը շաղէր, կը խաբէ, երգեցի, պիտի չտտէինք :

ԲԱՅԻՆ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ (ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ)

24.— Բայերը կը բաժնուին երեք խումբի : «Ել»ով վերջացող բայերը կը պատկանին Առաջին խումբին, «իլ»ով վերջացողները՝ Երկրորդ խումբին, «ար»ով վերջացողները՝ Երրորդ խումբին :

Օրինակ .

Առաջին խումբի բայեր են վազել, շարունակել, եւայլն : Երկրորդ խումբի բայեր են խօսիլ, պտտիլ, եւայլն : Երրորդ խումբի բայեր են կարդալ, լուալ, եւայլն :

ՀՐԱՀԱՆԳ 134.— Գտէք թէ քանի՛ երրորդ խումբին կը պատկանին հետեւեալ բայերը : Օրինակ . «Փորձեց» կ'ըլլայ փորձել, ուրեմըն առաջին խումբին կը պատկանի :

Փորձեց, կը ժպտիմ, պիտի կանչենք, պիտի խաղայ, քոյ մտածէ, կը փափաքէիք, յաղթեցինք, ներկելի, կը լողայիք, կը լուան, մսեցաւ :

ՀՐԱՀԱՆԳ 135.— Գտէք Ա. (= առաջին), Բ. (= երկրորդ) եւ Գ. (= երրորդ) խումբին պատկանող երեքական բայ :

ՄԱՆՕԹՈՒԹԻՒՆ.— Երբ սորվիք բայի մը խոնարհումը՝ սորված կ'ըլլաք խոնարհումը այլ խումբին պատկանող վրեթէ բոլոր բայերուն :

ՀՐԱՀԱՆԳ 136.— Գոց սորվեցէք «չահլի» բային խոնարհումը :

« Շ Ա Յ Ի Լ » Բ Ա Յ

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

ՆԵՐԿԱՅ

Եզակի

Յողնակի

(Ես)	կը շահ-իմ	(Մենք)	կը շահ-ինք
(դուն)	կը շահ-իս	(դուք)	կը շահ-իք
(ան)	կը շահ-ի	(անոնք)	կը շահ-ին

Անկատար Անճեմ

(Ես)	կը շահ-էի	(Մենք)	կը շահ-էինք
(դուն)	կը շահ-էիր	(դուք)	կը շահ-էիք
(ան)	կը շահ-էր	(անոնք)	կը շահ-էին

Կատարեալ Անճեմ

(Ես)	շահ-եցայ	(Մենք)	շահ-եցանք
(դուն)	շահ-եցար	(դուք)	շահ-եցաք
(ան)	շահ-եցաւ	(անոնք)	շահ-եցան

Բացարձակ ԱՊԱՌՆԻ

(Ես)	պիտի շահ-իմ	(Մենք)	պիտի շահ-ինք
(դուն)	պիտի շահ-իս	(դուք)	պիտի շահ-իք
(ան)	պիտի շահ-ի	(անոնք)	պիտի շահ-ին

Անկատար ԱՊԱՌՆԻ

(Ես)	պիտի շահ-էի	(Մենք)	պիտի շահ-էինք
(դուն)	պիտի շահ-էիր	(դուք)	պիտի շահ-էիք
(ան)	պիտի շահ-էր	(անոնք)	պիտի շահ-էին

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

ՆԵՐԿԱՅ

(դուն)	շահ-ի'ր	(Դուք)	շահ-եցի'ք
--------	---------	--------	-----------

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

ՆԵՐԿԱՅ

(Ես)	շահ-իմ	(Մենք)	շահ-ինք
(դուն)	շահ-իս	(դուք)	շահ-իք
(ան)	շահ-ի	(անոնք)	շահ-ին

ԱՆԿԱՏԱՐ

(Ես)	շահ-էի	(Մենք)	շահ-էինք
(դուն)	շահ-էիր	(դուք)	շահ-էիք
(ան)	շահ-էր	(անոնք)	շահ-էին

ԸՂԶԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

ՆԵՐԿԱՅ

(Ես)	թող շահ-իմ	(Մենք)	թող շահ-ինք
(դուն)	թող շահ-իս	(դուք)	թող շահ-իք
(ան)	թող շահ-ի	(անոնք)	թող շահ-ին

ԱՆԿԱՏԱՐ

(Ես)	թող շահ-էի	(Մենք)	թող շահ-էինք
(դուն)	թող շահ-էիր	(դուք)	թող շահ-էիք
(ան)	թող շահ-էր	(անոնք)	թող շահ-էին

ԱՆՈՐՈՇ ԵՂԱՆԱԿ

ԱՆԵՐԵՒՈՅԹ

Շահ-իլ

ՆԵՐԿԱՅ ԸՆԴՈՒՆՆԵԼՈՒԹԻՒՆ

Շահ-ող

ԱՆՅԵԱԼ ԸՆԴՈՒՆՆԵԼՈՒԹԻՒՆ

Շահ-ած, շահ-եր

ԱՊԱՌՆԻ ԸՆԴՈՒՆՆԵԼՈՒԹԻՒՆ

Շահ-ելիք, շահ-ելու

ՀՐԱՀԱՆԳ 137.- Խոնարհեցէք «խօսիլ» եւ «Ժպտիլ» բայերը՝ «չաճիլ» բային օրինակով:

ՀՐԱՀԱՆԳ 138.- Ըսէք Աներևոյթը, Խուժը, Ժամանակը, Դէմքը եւ Թիւրը հետեւեալ բայերուն: Օրինակ. «Կը ժպտիս» = «Ժպտիլ», Բ. խուժը, Ներկայ, Բ. դէմք, Ելակի:

կը ժպտիս, խորհեցաւ, կը դեղնէիմ, քափեցամ, պիտի վըստահիմ, պիտի շահէի, կը խորհիս, կը ծռիւք, պիտի պտըտէիմ:

Կը հռտոտեմ, բարեւեց, պիտի բարեւես, ծռեցայ, կը մամբէր, կը շահիմք, պիտի խառնէիք, պիտի շիմէր, կը նայէիք, կը կայսեմ:

ՀՐԱՀԱՆԳ 139.— Գիծոյ մը՝ վերէն-վար կիսեցէք գրատախտակը. ձախ սիւնակին մէջ տակ-տակի դրեցէք այն մասնիկները, որոնք կ'աւելցնէք «վազել» բային արմատին վրայ՝ կազմելու համար անոր Սահմանական Ներկան: Յետոյ, անոնց դիմաց, աջ սիւնակին մէջ՝ տակ-տակի դրեցէք այն մասնիկները, որոնք կ'աւելցընէք «չահիլ» բային արմատին վրայ՝ կազմելու համար անոր Սահմանական Ներկան:

ՀՐԱՀԱՆԳ 140.— Կրկնեցէք նոյն հրահանգը՝ «վազել» եւ «չահիլ» բայերուն՝ նախ Անկատար Անցեալին եւ յետոյ՝ Կատարեալ Անցեալին համար:

ՀՐԱՀԱՆԳ 141.— Հետեւեալ բայերէն եղակները վերածեցէք յողնակիի, եւ յողնակիները վերածեցէք եզակիի: Օրինակ. «Անոնք մարեցան» — ան մարեցաւ. «դուն կը ծախես» — դուք կը ծախէիք:

Անոնք մարեցան, դուն կը ծախես, ես մաքրեցի, դուն շարեցիր, մենք կը կազմեմք, անոնք պիտի քոխն, ան քոչ սանտրէ, դուք կը գովէիք, ան կը փայլէր, մենք կը շնչեմք, ես համոզեցի:

ՀՐԱՀԱՆԳ 142.— Գտէք նախորդ հրահանգին բայերուն աներեւոյթը: Օրինակ. Մարեցան — մարիլ:

ՀՐԱՀԱՆԳ 143.— Մէկական փոքր խօսք կազմեցէք «փայլիլ», «բացատրել» եւ «պտըտիլ» բայերով:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Քանի՞ խումբի կը բաժնուիմ բայերը: Ինչպէ՞ս կը գտնեմք բայի մը ո՞ր խումբիմ պատկանիլը:

ԳՐԱԽՈՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՀՐԱՀԱՆԳ 144.— Գտէք 1) Աներեւոյթը, 2) Խումբը, 3) Ժամանակը, 4) Դէմքը եւ 5) Թիւը հետեւեալ բայերուն. զանոնք դրեցէք տետրակին մէջ:

Աշխատեցար, եփեցիմ, կը մարսեմ, կը շուարէր, պիտի աղօթէիք, պիտի յարգես, կը փաթթուի, սրբեցիմք, ծալից:

ԳԱՍ 15

ԲԱՅԻՆ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ (ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ)

ՀՐԱՀԱՆԳ 145.— Գոց սորվեցէք «լողալ» բային խոնարհումը:

« Լ Ո Ղ Ա Լ » Բ Ա Յ

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

ՆԵՐԿԱՑ

	Եզակի	Յոգնակի
(Ես)	կը լողամ	(Մենք) կը լողանք
(դուն)	կը լողաս	(դուք) կը լողաք
(ան)	կը լողայ	(անոնք) կը լողան

Անկատար ԱՆՑԵԱԼ

(Ես)	կը լողայի	(Մենք) կը լողայինք
(դուն)	կը լողայիր	(դուք) կը լողայիք
(ան)	կը լողար	(անոնք) կը լողային

Կատարեալ ԱՆՑԵԱԼ

(Ես)	լողացի	(Մենք) լողացինք
(դուն)	լողացիր	(դուք) լողացիք
(ան)	լողաց	(անոնք) լողացին

Բացարձակ ԱՊԱՌՆԻ

(Ես)	պիտի լողամ	(Մենք) պիտի լողանք
(դուն)	պիտի լողաս	(դուք) պիտի լողաք
(ան)	պիտի լողայ	(անոնք) պիտի լողան

Անկատար ԱՊԱՌՆԻ

(Ես)	պիտի լողայի	(Մենք) պիտի լողայինք
(դուն)	պիտի լողայիր	(դուք) պիտի լողայիք
(ան)	պիտի լողար	(անոնք) պիտի լողային

ՀՐԱՄԱՑԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ
ՆԵՐԿԱՅ

(Դուռ) լող-ամ' (Դուռք) լող-ացէ՛ք

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

ՆԵՐԿԱՅ

(Ես) լող-ամ' (Մենք) լող-անք
(դուռն) լող-ասս (դուռք) լող-աք
(ան) լող-այ (անոնք) լող-ան

ԱՆԿԱՏԱՐ

(Ես) լող-այի (Մենք) լող-այինք
(դուռն) լող-այիր (դուռք) լող-այիք
(ան) լող-ար (անոնք) լող-ային

ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

ՆԵՐԿԱՅ

(Ես) թող լող-ամ' (Մենք) թող լող-անք
(դուռն) թող լող-ասս (դուռք) թող լող-աք
(ան) թող լող-այ (անոնք) թող լող-ան

ԱՆԿԱՏԱՐ

(Ես) թող լող-այի (Մենք) թող լող-այինք
(դուռն) թող լող-այիր (դուռք) թող լող-այիք
(ան) թող լող-ար (անոնք) թող լող-ային

ԱՆՈՐՈՇ ԵՂԱՆԱԿ

ԱՆԵՐԵՒՈՅԹ լող-ալ
ՆԵՐԿԱՅ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ լող-ացող
ԱՆՑԵԱԿ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ լող-ացած, լող-ացեր
ԱՊԱՌՆԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ լող-ալիք, լող-ալու

ՀՐԱՀԱՆԳ 146.— Խոնարհեցէք «սյոռալ», «դողալ» եւ «կար-
դալ» բայերը՝ «լողալ» բային օրինակով :

ՀՐԱՀԱՆԳ 147.— Ըսէք հետեւեալ բայերուն Սահմանական
Ներկան եւ Բացարձակ Ասլառնին . — լուալ, հաւատալ, սողալ :

ՀՐԱՀԱՆԳ 148.— Ըսէք նախորդ հրահանգին բայերուն Սահ-
մանական Անկատար Անցեալն ու Անկատար Ապառնին :

ՀՐԱՀԱՆԳ 149.— Գրատախտակին վրայ, տակ-տակի գոց դրե-
ցէք այն մասնիկները, որոնք աւելցուած են «լողալ» բային արմա-
տին վրայ՝ Սահմանական Ներկային մէջ :

ՀՐԱՀԱՆԳ 150.— Գրատախտակին վրայ, տակ-տակի գոց դրե-
ցէք 1) այն մասնիկները, որոնք աւելցուած են «լողալ» բային ար-
մատին վրայ՝ Սահմանական Անկատար Անցեալին մէջ, եւ 2) Կա-
տարեալ Անցեալին մէջ :

ՀՐԱՀԱՆԳ 151.— Ըսէք Անբերեոյթը, Խումբը, Ժամանակը,
Դէմքը եւ Թիւը հետեւեալ բայերուն .

Խնդացին, կը հազամ, մաշեցաւ, կը պռսաք, դողողացիր, կը
տեղայ, պիտի երթար, չընաց, կը խաղայինք, կը պարպէին, կը
հետեւիք, հաւատաց, կը խորհէիք, կը բարկանաս, կարմրեցաք, կը
կանչէինք, պիտի խաղաղի, պիտի հեւան :

ՀՐԱՀԱՆԳ 152.— Հրամայականները դրեցէք հետեւեալ բայե-
րուն՝ գրատախտակին վրայ՝ զատելով մասնիկները : Օրինակ . «Կար-
դալ» — կարդ-ա՛, կարդ-ացէ՛ք :

Կարդալ, խնդալ, լուծել, շարժիլ, լուալ, կապել, նայիլ :

ՀՐԱՀԱՆԳ 153.— Հրահանգ 151-ի բայերէն եղակները վե-
րածեցէք յուղնակիի, յուղնակիները՝ եղակիի :

ՀՐԱՀԱՆԳ 154.— Գրատախտակը բաժնեցէք երեք հաւասար
մասի . առաջին սիւնակին մէջ, տակ-տակի դրեցէք այն մասնիկնե-
րը, որոնք կ'աւելցնենք «վալ-իլ» բային վրայ Սահմանական Ներ-
կային մէջ : Երկրորդ սիւնակին մէջ, դրեցէք «չահ-իլ» բային Սահ-
մանական Ներկայի մասնիկները : Երրորդ սիւնակին մէջ դրեցէք
«լող-ալ» բային Սահմանական Ներկայի մասնիկները :

ՀՐԱՀԱՆԳ 155.— Նոյնը կրկնեցէք Անկատար Անցեալին եւ Կատարեալ Անցեալին համար:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.— Ձայնաւորով սկսող բայի մը առջեւ (կ') կը դնենք եւ ոչ թէ «կը»: Օրինակ.

Ներկայ		Անկատար Անցեալ	
կ'ուզեմ	կ'ուզեմք	կ'ուզէի	կ'ուզէինք
կ'ուզես	կ'ուզէք	կ'ուզէիր	կ'ուզէիրք
կ'ուզէ	կ'ուզեն	կ'ուզէր	կ'ուզէին

ՀՐԱՀԱՆԳ 156.— Խոնարհեցէք երգել, ապշիլ եւ երթալ բայերուն Սահմանական Ներկան եւ Անկատար Անցեալը:

ԳՐԱԻՈՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՀԱՆԳ 157.— Կարդացէք հետեւեալ գրութիւնը, դտէք բայերը եւ ըսէք անոնց Աներեւոյթը, Խումբը, Ժամանակը, Դէմքը եւ Թիւր:

Ա Պ Ր Ի Լ 1



Ատտու մը, տղեց մը խաշոր տուփ մը երկարեց Թումիկ պապիկին ու ըսաւ. «Այս տուփը դրկեցին նամակատուներն. քեզի՛ կը պատկանի»:

Թումիկ պապիկը ուրախութենէն շուարեցաւ պահ մը. ի՛նչ պիտի գտներ արդեօք տուփին մէջ...

Յանկարծ բան մը մտածեց, եւ փսփսաց ինքնիրեն. «Ես ի՛նչ պիտի ընեմ նուէրը. հիմա՛ իսկ կ'երթամ Թորիկ պապիկեան տունը եւ այս տուփը կը նուիրեմ անոր քոռնիկին»:

Եւ... արագօրէն մեկնեցաւ տուն, փոխեց հագուստները, գլխարկն ու գաւագանը, եւ ուղղուեցաւ դէպի իր բարեկամին բնակարանը:

Ճամբան, սակայն, զգաց թէ տուփը երբեմն կը շարժէր թելին տակ. վախէն գամուեցաւ նոյն տեղը. ռտֆերը կը դողդոջային, սիրտը կը բարախէր: Պահ մը ետք ձայներ լսեց տուփին մէջէն: Վախէն պիտի մեռնէր: Անցորդներ իրեն կը նայէին գարմացումով եւ հետաքրքրութեամբ կը դիտէին տուփը, որ յանկարծ գետին սահեցաւ իր հաստ ու կարն թելին տակէն ու բացուեցաւ: Տուփէն դուրս վազեց... սեւուլիկ կատու մը...:

ԴԱՍ 16

«ԸԼԼԱԼ» ԲԱՅՇ

|| ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.— «ԸԼԼԱԼ» բային խոնարհումը
քիչ յը տարբեր է միւս բայերուն խոնարհումէն:

Ահա «ԸԼԼԱԼ» բային խոնարհումը.

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

ՆԵՐԿԱՅ	Անկատար ԱՆՑԵԱԼ	Կատարեալ ԱՆՑԵԱԼ
(Ես) եմ	(Ես) էի	(Ես) եղայ
(դու) ես	(դու) էիր	(դու) եղար
(ան) է	(ան) էր	(ան) եղաւ
(մենք) ենք	(մենք) էինք	(մենք) եղանք
(դուք) էք	(դուք) էիք	(դուք) եղաք
(անոնք) են	(անոնք) էին	(անոնք) եղան

Բացարձակ ԱՊԱՌՆԻ

Անկատար ԱՊԱՌՆԻ

(Ես) պիտի ըլլամ	(Ես) պիտի ըլլայի
(դու) պիտի ըլլաս	(դու) պիտի ըլլայիր
(ան) պիտի ըլլայ	(ան) պիտի ըլլար
(մենք) պիտի ըլլանք	(մենք) պիտի ըլլայինք
(դուք) պիտի ըլլաք	(դուք) պիտի ըլլայիք
(անոնք) պիտի ըլլան	(անոնք) պիտի ըլլային

ՀՐԱՄԱՑԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

ՆԵՐԿԱՅ

(Դու) եղի՛ր

(Դու) եղե՛ք

ՍՏՈՐԱԳԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

ՆԵՐԿԱՅ	Անկատար
(Ես) ըլլամ	(Ես) ըլլայի
(դու) ըլլաս	(դու) ըլլայիր
(ան) ըլլայ	(ան) ըլլար
(մենք) ըլլանք	(մենք) ըլլայինք
(դուք) ըլլաք	(դուք) ըլլայիք
(անոնք) ըլլան	(անոնք) ըլլային

ԸՂԶԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

ՆԵՐԿԱՅ	Անկատար
(Ես) քոյ ըլլամ	(Ես) քոյ ըլլայի
(դու) քոյ ըլլաս	(դու) քոյ ըլլայիր
(ան) քոյ ըլլայ	(ան) քոյ ըլլար
(մենք) քոյ ըլլանք	(մենք) քոյ ըլլայինք
(դուք) քոյ ըլլաք	(դուք) քոյ ըլլայիք
(անոնք) քոյ ըլլան	(անոնք) քոյ ըլլային

ԱՆՈՐՈՇ ԵՂԱՆԱԿ

ԱՆԵՐԵՒՈՑԹ	Ըլլալ
ՆԵՐԿԱՅ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ	Եղող
ԱՆՑԵԱԼ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ	Եղած, եղեր
ԱՊԱՌՆԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ	Ըլլալիք, ըլլալու

ՀՐԱՀԱՆԳ 158.— Խոնարհեցէք «ԸԼԼԱԼ» բայը:

ՀՐԱՀԱՆԳ 159.— Գտէք հետեւեալ բայերուն ժամանակը, Դէմ-
քը եւ Թիւը: Օրինակ. «Եղայ» — Կատարեալ Անցեալ, Ա. դէմք,
Եղակի:

Եղայ, են, պիտի ըլլայ, եղի՛ր, եղե՛ք, պիտի ըլլար, եմ,
էին, էք, եմ, եղան, էիր, պիտի ըլլան, ես, եղանք, է, պիտի ըլ-
լայիք, էիք, եղանք, ենք, էի, պիտի ըլլաք, պիտի ըլլայիք, էր:

ՀՐԱՀԱՆԳ 160.— Նախորդ հրահանգին բայերէն եզակիները վերածեցէք յողնակիի, յողնակիները՝ եզակիի: Օրինակ. «Ես եզայ» — Մենք եզանք. «Անոնք են» — Ան է:

ՀՐԱՀԱՆԳ 161.— Գտէք հետեւեալ բայերուն 1) Աներեւոյթը, 2) Խուճը, 3) Ժամանակը, 4) Դէմքը, 5) Թիւը:

Կը պատռէր, եղայ, յորդեցան, պիտի կատղին, կ'ուզէի, կը յառաջանայ, պիտի յիշէի, կը վախճամ, պիտի ուշանաք, կ'երգէր, կ'այցելեմք, կը պառկէիք, պիտի ըլլաս, էինք:

Մտածեցի, կը դողաս, պիտի ըլլամ, կը բարկանայիմք, յաղթեց, կ'ըսէին, կ'առնէր, պիտի սողան, խորհեցաք, կ'երթանք, կ'աղօթէ, մաշեցան, էի, կը գրէի:

Տարածեցի, կը պատահի, յոգնեցան, պիտի ըլլաք, եղէք, վագնցիր, կը խնայիր, կը շատախօսեմ, եզանք, պիտի հագայ, կը խաղար, կարդա՛, ժպտեցէք, էի, էք, խնայցին, կ'ընդօրինակէ, խօսի՛ր, կը խօսէր, կը սահի, պոռացինք:

ՀՐԱՀԱՆԳ 162.— Ըսէք շարեւ, հետեւիլ եւ գքալ բայերուն Սահմանական Ներկան: Յետոյ ըսէք երեքին ալ Անկատար Անցեալը. յետոյ՝ երեքին ալ Կատարեալ Անցեալը. յետոյ երեքին ալ՝ Բացարձակ Ապառնին, յետոյ՝ Անկատար Ապառնին, յետոյ՝ Հրամայական Ներկան:

ՀՐԱՀԱՆԳ 163.— «Սոնիկը» գրութեան մէջ կայ տասնըեօթը հատ բայ. գտէք դանոնք: Յետոյ ըսէք թէ անոնցմէ քանի՛ հատը «ըլլալ» բայ է. ապա ըսէք թէ մնացեալ բայերը ո՛ր խումբին կը պատկանին:

ՀՐԱՀԱՆԳ 164.— Կարճ խօսքեր կազմեցէ՛ք՝ հետեւեալ բառերէն երկուքական հատ գործածելով ամէն անգամ: Օրինակ. «Հայր — աշխատիլ» — Հայրս կ'աշխատի ամբողջ օրը:

Հայր—աշխատիլ, շոգեմալ—մեկնիլ, դեղագործ—ըլլալ, առաջնութիւն—շահիլ, աշակերտներ—խաղալ, ծոյլերը—պատժուիլ:

ՀՐԱՀԱՆԳ 165.— Պատմեցէ՛ք նկարներուն պատմութիւնը՝ պատասխանելով հետեւեալ հարցումներուն. 1) Նինի դառնուկը, Սկիւռը եւ Մկնիկը ինչո՞վ պտոյտի կ'երթան առտու մը. 2) Քանի՛ հատ նստոց ունի Նինին հեծիկը. 3) Ո՛ւր կը նստի Մկնիկը. 4) Ո՞վ շատ կը մտի ճամբան. 5) Ո՞վ երկար պոչ մը ունի. 6) Որպէսզի Մկնիկը չմտի՝ Նինին եւ Սկիւռը ի՛նչ կ'ընեն:



ԳՐԱԽՈՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՀՐԱՀԱՆԳ 166.— Նախ թուղթի մը վրայ՝ քանի մը տողի մէջ գրեցէ՛ք նախորդ հրահանգին պատմութիւնը. ձեր գրածը կարդացէ՛ք չորս—հինգ անգամ, սրբագրեցէ՛ք եւ յետոյ ընդօրինակեցէ՛ք տետրակին մէջ: Ապա ձեր գրածին մէջէն գտէ՛ք հինգ հատ բայ եւ կարմիր մեկանով ընդգծեցէ՛ք դանոնք:

Գ Ո Յ Ա Կ Ա Ն

25.— Ինչ որ կայ աշխարհի վրայ՝
անուն մը ունի:

Օրինակ.

- «Տետրակ» է անունը այն առարկային, որուն մէջ կը գրենք.
- «Տուն» է անունը այն տեղին, ուր կը բնակինք.
- «Սալորենի» է անունը այն բոյսին, որ սալոր կու տայ.
- «Կատու» է անունը այն կենդանիին, որ մուկ կը բռնէ.
- «Սափրիչ» է անունը այն անձին, որ մազ կը կտրէ:


26.— Քերականութեան մէջ անուններուն կ'ըսենք «գոյական»:

Օրինակ. «Տետրակ», «տուն», «սալորենի», «կատու», «սափրիչ» անունները գոյականներ են:

ՀՐԱՀԱՆԳ 167.— Դիտեցէք ձեր շուրջը եւ ըսէք հինգ հաստ անուն՝ գոյութիւն ունեցող բանի:

ՀՐԱՀԱՆԳ 168.— Դուք-ձեզ երեւակայեցէք պարտէզի մը մէջ, եւ ըսէք հինգ հաստ անուն՝ հոն գոյութիւն ունեցող բանի:

ՀՐԱՀԱՆԳ 169.— Դիտեցէք հետեւեալ պատկերները եւ ըսէք ձեր հոն տեսած բաներուն անունները:



ՀՐԱՀԱՆԳ 170.— Պատմեցէք երկրորդ նկարին պատմութիւնը՝ պատասխանելով հետեւեալ հարցումներուն. Ո՛ւր կեցեր է Թումիկ պապիկը. Ի՛նչ կ'ընէ. ո՛վ կեցեր է կամուրջին տակ. Ի՛նչ կ'ընէ. Ինչո՛ւ. Ի՛նչ պիտի պատահի:

ՀՐԱՀԱՆԳ 171.— Ըսէք թէ հետեւեալ գոյականները ինչի՛ անուն են, — առարկայի՞, տեղի՞, բոյսի՞, կենդանիի՞ թէ անձի:

Գնդակ, աղջիկ, հայր, խանութ, ծաղիկ, շնիկ, կամուրջ, մարդ, տղայ, տուփ, գլխարկ, պուպրիկ, խաղալիկ, շուկայ, քար, ծառ, դռն, շուշան:

ՀՐԱՀԱՆԳ 172.— Ըսէք թէ հետեւեալ բառերը ինչո՛ւ գոյական են: Օրինակ. «Դաշտ» բառը գոյական մըն է, որովհետեւ անունն է գոյութիւն ունեցող բանի մը (տեղի մը):

Դաշտ, կաշի, դեղագործ, կափարիչ, քաղաք, դուռ, առիւծ, մոխրաման, բծիշկ, գրացի, ընկուզենի, կազամար, ընկեր:

ՀՐԱՀԱՆԳ 173.— Գտէք հետեւեալ խօսքերուն գոյականները եւ բացատրութիւն տուէք: Օրինակ. «Ձկնորս» բառը գոյական մըն է՝ որովհետեւ «ձկնորս» կոչուող բան մը (անձ մը) կա՛յ, գոյութիւն ունի:

Մեր ձկնորսը ձուկ բռնեց: Եզրայրդ պարտէզ գնաց: Դպրոցը ձգեցի գրիչներս: Մեխակները ծաղկաման դիր: Դերձակը մըկքատ ու ասեղը տարաւ խանութ: Ճանները շատ անմաքուր միջատներ են. բնաւ ճանն մի բռնէք: Ժամացոյցս ժամագործին տուի, որպէսզի փոխէ սլաքները:

27.— Գոյականները (այսինքն անունները) երկու տեսակ են, — Յատուկ եւ Հասարակ:

Յատուկ է այն գոյականը, որ բանի մը՝ իրե՛ն միայն յատուկ եղող մասնաւոր անունն է:

Օրինակ. Այս «լիճը» կը կոչուի Սեւան. ամէ՛ն լիճի անուն «Սեւան» չէ՛: Այս լիճին մասնաւոր, յատուկ անունն է «Սեւան»:

Այս «տղան» կը կոչուի Զաւէն. ամէ՛ն տղու անուն «Զաւէն» չէ՛: Այս տղուն մասնաւոր, յատուկ անունն է «Զաւէն»:

|| ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.— Յատուկ անունները կը սկսինք զլսազերով:

28.— Հասարակ է այն գոյականը, որ անունն է նոյն տեսակին պատկանող բոլոր բաներուն:

Օրինակ. «Լեռ» անունը հասարակ է, որովհետեւ ամէ՛ն լեռի կրնանք «լե՛ռ» ըսել. (բայց «Արագած» անունը յատուկ է, որովհետեւ ամէն լեռի չենք կրնար «Արագած» ըսել):

«Աղջիկ» անունը հասարակ է, որովհետեւ ամէ՛ն աղջիկի կըրնանք «աղջի՛կ» ըսել. (բայց «Շողիկ» անունը յատուկ է, որովհետեւ ամէն աղջիկի չենք կրնար «Շողիկ» ըսել):

ՀՐԱՀԱՆԳ 174.— Գտէք թէ հետեւեալ անուններէն որո՛նք յատուկ են եւ որո՛նք՝ հասարակ: Օրինակ. «Պէյրութ» յատուկ անուն է, որովհետեւ ամէն քաղաքի անուն «Պէյրութ» չէ. չենք կրնար

ամէն քաղաքի «Պէյրութ» ըսել: «Գիւղ» բառը հասարակ անուն է՝ որովհետեւ կրնանք ամէն գիւղի «գիւղ» ըսել:

Պէյրութ, գիւղ, Փարիզ, քաղաք, Ֆոֆսի, շուն, ընկերուհի, Սեդա, Արարատ, Սիփան, լեռ, անապատ, Սահարա, Լիբանան, երկիր, գետ, Եփրատ, հացագործ, Կարպիս, ծաղիկ, Նեղոս, կղզի:

ՀՐԱՀԱՆԳ 175.— Գտէք թէ հետեւեալ անուններէն որո՛նք յատուկ են, եւ անոնց առաջին գիրերը ըրէք զլսազիր:

Նդուարդ, տղայ, դասարան, գոհարիկ, աղջիկ, շուշիկ, պուարիկ, ապակի, տիգրիս, գետ, անի, արա, անահիտ, հնդկաստան, տամասկոս, լոնտոն, ռուսիա, աստղ, տուն, գնդակ, նիւեոբ, արագած, սասուն, դաւիթ, քաթօ, միմի, շիրակ, սեւան, ափրիկէ:

ՀՐԱՀԱՆԳ 176.— Գտէք «ա» գիրով սկսող հինգ հատ հասարակ անուն: Յետոյ գտէք «ա» գիրով սկսող հինգ հատ յատուկ անուն:

ՀՐԱՀԱՆԳ 177.— Տարը հատ հասարակ անուն գտէք «Ապրիլ 1» գրութեան մէջէն (էջ 54-55):

ՀՐԱՀԱՆԳ 178.— Գտէք թէ հետեւեալ բառերէն որո՛նք բայ են, եւ որո՛նք՝ գոյական:

Հագնիլ, հագուստ, կը խմէր, ջուր, պառկիլ, քնացաւ, մահալակալ, գիր, գիրք, գրել, կարդացիմք, մեքենայ, շուն, կը հաջէ, կերակուր, ուտել, մեռաւ, կօշիկ, քաղցիմ, կը փախի, բանտ, աղօթեցի, եկեղեցի, դպրոց, ներկ, պիտի ներկէր, ներկաման, աչք, կը նայիմ, օճառ, օճառուիլ, օրօրոց, կ'օրօրէիմք, մահուկ:

ԳՐԱԽՈՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՀՐԱՀԱՆԳ 179.— Կարճ խօսքեր կաղմեցէք հետեւեալ բառերէն երկուքական հատ գործածելով ամէն անգամ: Յետոյ կապոյտ դիժ մը քաջեցէք հասարակ անուններուն տակ, կարմիր դիժ մը՝ յատուկ անուններուն տակ եւ երկու հատ կարմիր դիժ՝ բայերուն տակ:

Պարտեգ—ծաղիկ. օդանաւ—Եւրոպա. Զաւէն—կարդալ. ամառ—ծով. Ատրիմէ—քթիշիկ:

ԳՈՅԱԿԱՆԻՆ ՔԻՒԸ

29.— Երբ գոյական մը միայն մէկ հատ բան ցոյց տայ՝ եզակի է. երբ մէկէ աւելի բան ցոյց տայ՝ յոգնակի է:

Օրինակ. Երբ ըսեմ «Տետրակս շատ մաքուր է», «տետրակս» գոյականը ցոյց կու տայ միայն մէկ հատ տետրակ. «տետրակս» գոյականը եզակի է:

Երբ ըսեմ «տետրակներս շատ մաքուր են», «տետրակներս» գոյականը ցոյց կու տայ մէկէ աւելի տետրակ. «տետրակներս» գոյականը յոգնակի է:

30.— Եզակի գոյական մը յոգնակի ընելու համար՝ վրան «եր» կամ «ներ» կ'աւելցնենք:
«եր» կ'աւելցնենք՝ երբ բառը մէկ վանկնոց է. «ներ» կ'աւելցնենք՝ երբ բառը մէկէ աւելի վանկ ունի:

Օրինակ. «էջ» գոյականը մէկ վանկնոց է. անոր յոգնակին կ'ըլլայ «էջեր»: «Տետրակ» եւ «դասարան» գոյականները մէկէ աւելի վանկ ունին. անոնց յոգնակին կ'ըլլայ «տետրակներ», «դասարաններ»:

ՀՐԱՀԱՆԳ 180.— Հետեւեալ գոյականները յոգնակի ըրէք՝ անոնց վրայ աւելցնելով «եր» կամ «ներ»: Օրինակ. «կուտ»—կուտեր, «մկրատ» — մկրատներ:

Կուտ, մկրատ, աւագան, շապիկ, միութիւն, ջուր, աղ, ձիաւար, ձի, թուղթ, կառք, ակնոց, վերարկու, շուն, լուսանկարիչ:

ՀՐԱՀԱՆԳ 181.— Ըսէք թէ հետեւեալ գոյականներէն որո՞նք եզակի են եւ որոնք՝ յոգնակի:

Շնիկներ, մուկեր, սէր, սեղաններ, գաւագան, աւել, մամբարդ, մանկապարտէզ, կառքեր, տէրեր, կաղամբներ, բերան, սոսքեր, վարդեր, գօտիներ:

ՀՐԱՀԱՆԳ 182.— Գծիկներով զատեցէք նախորդ հրահանգին յոգնակի գոյականներուն «եր» կամ «ներ» մասնիկները: Օրինակ. «Շնիկներ» = շնիկ-ներ, «մուկեր» = մուկ-եր:

ՀՐԱՀԱՆԳ 183.— Հետեւեալ խօսքերուն բոլոր բառերը վերածեցէք յոգնակի:

Օրինակ. Եղբայրս դրեց իր պարտականութիւնը.

Եղբայրներս գրեցին իրենց պարտականութիւնները:

Եղբայրս գրեց իր պարտականութիւնը: Ես կը սիրեմ իմ քոյրս: Ան կը կարդայ գիշերը: Դուն նկարը տեսա՞ր: Ինք գծեց քու պատկերդ: Ուսուցիչը գովեց իր աշակերտն ու աշակերտուհին: Դուն կը մտնի ձմեռը: Կազմարարը քու գիրքդ եւ բառարանդ պիտի կազմէ: Դուն քու դասդ կարդա՛:


ՄԱՆՕԹՈՒԹԻՒՆ.— 1) Երբ «ն» ղերով վերջացող գոյականի մը վրայ «ներ» աւելցնենք՝ երկու հատ «ն» քով-քովի կու գայ: Օրինակ. Դասարան — դասարաններ — դասարաններ:

2) Երբ գոյականի մը վերջին ղերը անձայն «յ» է (զրուսղ բայց չհնչուսղ «յ»), յոգնակի մասնիկը աւելցնելէ առաջ այդ «յ» ղերը կը վերցնենք: Օրինակ. ճամբայ — ճամբա — ճամբաներ = ճամբաներ:

ՀՐԱՀԱՆԳ 184.— Յողնակին կազմեցէք հետեւեալ բառերուն:

Մեքենայ, քահանայ, երեկոյ, սատանայ, վկայ, աւագան, բան, հաւաքածոյ, ընծայ, սեղան, տուն, ծառայ:

ՀՐԱՀԱՆԳ 185.— Գտէք հետեւեալ գրութեան գոյականները եւ ըսէք թէ որո՞նք յողնակի են եւ որո՞նք՝ եզակի:



ԺԻՐԱՅՐԻՆ ԿՕՇԻԿՆԵՐԸ



Ժիրայրին կօշիկները շատ աղտոտ էին: «Նայէ՛ սա կօշիկներուդ ցեխին», բարկացաւ մայրիկը եւ պատուիրեց որ անմիջապէս ներկէ կօշիկները:



Ժիրայր գնաց միւս սենեակը, առաւ ներկի տուփը եւ սկսաւ ներկել իր կօշիկները: Բայց այնքա՛ն արագ ներկեց եւ այնքա՛ն շատ ներկ քսեց անոնց վրայ, որ աղտոտեց իր երեսները, ձեռքերը, բանկոնն ու տափատը:



Երբ վերջացուց՝ գնաց մայրիկին քով՝ որպէսզի անոր ցուցնէ իր փայլուն կօշիկները, եւ հպարտօրէն ըսաւ.

— Նայէ՛ մայրիկ, ինչպէ՛ս կը փայլին կօշիկներս:

Մայրիկը ապշած նայեցաւ ժիրայրին ու յանդիմանեց գայն.

— Հապա երե՞սդ, հագո՞ւսող, ձեռքերդ... անո՛նց նայէ դուն...:

ՀՐԱՀԱՆԳ 186.— Գծիկներուն տեղ դրէք հետեւեալ գոյականներէն ա՛յն, որ կը յարմարի.— խանութպանը, խանութպանները, աչքերս, աչքերդ, ծաղիկը, ծաղիկները, մատիտներս, մատիտս, շունը, շուները, նամբան:

Այս — ասոյշ հոտ ունի: Այս — անոյշ հոտ ունին: Քու — կապոյտ են: Իմ — սեր են: — բացաւ իր խանութը: — բացին իրենց խանութները: — կորսուեցաւ: — կորսուեցան: Այդ — դպրոց կը տանի: Մեր — փախան տունէն: Մեր — փախաւ տունէն:

ՀՐԱՀԱՆԳ 187.— Գտէք «Ժիրայրին կօշիկները» գրութեան բայերը, եւ ըսէք թէ եզակի՞ են թէ յողնակի:

ՀՐԱՀԱՆԳ 188.— Խոնարհեցէք հետեւեալ խօսքերուն բայերը՝ կրկնելով ամբողջ խօսքը:

- Օրինակ. Ես կը գրեմ իմ դասս
- Դուն կը գրես քու դասդ.
- Ան կը գրէ իր դասը... և այլն

Ես կը գրեմ իմ դասս: Ես կը գրէի իմ դասս: Ես գրեցի իմ դասս: Ես պիտի գրեմ իմ դասս: Ես պիտի գրէի իմ դասս: Ես պիտի գրէի իմ դասս:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ինչպէ՛ս կը կազմեմ գոյականներու յագնակին: Ե՛րբ «եր» եւ ե՛րբ «ներ» կ'աւելցնեմ:

ԳՐԱԽՈՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՀՐԱՀԱՆԳ 189.— «Ժիրայրիս կօշիկները» գրութեան շեղագիր բառերէն եզակիները վերածեցէք յողնակիի, յողնակիները՝ եզակիի: Յետոյ գրութիւնը ընդօրինակեցէք տետրակին մէջ:

ԳՈՅԱԿԱՆԻՆ ՀՈԼՈՎԸ ԵՒ ՅՕԴԸ

31.— Գոյական մը հոլովել՝ կը նշանակէ այդ գոյականին եզակիին վըրայ՝ կարգով «ի», «է» եւ «ով» աւելցնել, իսկ յոգնակիին վրայ «ու», «է» եւ «ով» աւելցնել:

Օրինակ .	Եզակի	Յոգնակի
Ուղղական } Հայցական }	Պարտէզ	Պարտէզներ
Սեռական } Տրական }	Պարտէզի	Պարտէզներու
Բացառական Գործիական	Պարտէզէ Պարտէզով	Պարտէզներէ Պարտէզներով

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.— 1) Երբ գոյականի մը վրայ «ի», «է», «ով» կամ «ու» չէ աւելցուած՝ կ'ըսենք թէ այդ գոյականը ուղղական—հայցական հոլով է. Օրինակ. Պարտէզ, պարտէզներ:

2) Երբ գոյականի մը վրայ «ի» կամ «ու» աւելցուած է՝ կ'ըսենք թէ սեռական—տրական հոլով է. Օրինակ. Պարտէզի, պարտէզներու:

3) Երբ գոյականի մը վրայ «է» աւելցուած է՝ կ'ըսենք թէ բացառական հոլով է. Օրինակ. Պարտէզէ, պարտէզներէ:

4) Երբ գոյականի մը վրայ «ով» աւելցուած է՝ կ'ըսենք թէ գործիական հոլով է. Օրինակ. Պարտէզով, պարտէզներով:

ՀՐԱՀԱՆԳ 190.— Հոլովներուն անունները դոյ ըսէք կարգով, — Ուղղական—հայցական, սեռական—տրական, բացառական, գործիական: Յետոյ զանոնք տակ—տակի դրեցէք գրատախտակին վրայ:

ՀՐԱՀԱՆԳ 191.— Հոլովեցէք հետեւեալ գոյականները՝ միշտ տալով հոլովներուն անունները: Օրինակ. Ուղղական—հայցական = Սեղան, սեռական—տրական = սեղանի, բացառական = սեղանէ, գործիական = սեղանով, Յոգնակի՝ Ուղղական—հայցական = սեղաններ, Եւայլն:

Սեղան, էջ, դասարան, տետրակ, գրատախտակ, աչք:

ՀՐԱՀԱՆԳ 192.— Գտէք հոլովները, հետեւեալ գոյականներուն. բացատրութիւն տուէք: Օրինակ. Ակնոցի — Սեռական—տրական հոլով է, որովհետեւ վրան «ի» աւելցուած է: Թուղթեր — Ուղղական—հայցական հոլով է, որովհետեւ վրան «ի», «է», «ով», կամ «ու» չէ աւելցուած:

Ակնոցի, քուղթեր, տուփէ, տուփերէ, տուփ, տուփեր, գըլխարկ, ձեռնով, ձեռնբերով, ձեռքի, ձեռքերու, աման, ամանէ, պատուհան, պատուհաններու, ջուրի, աշակերտէ, աշակերտներ, աշակերտ, նիշեր, խնդիր, փողոցէ, միտքով, դպրոցներ, մանուկներով, աղջիկներուն, բառեր, գրիչի:

ՀՐԱՀԱՆԳ 193.— Նախորդ հրահանգին գոյականներէն եզակիները յոգնակիի վերածեցէք, յոգնակիները՝ եզակիի: Օրինակ. «Ակնոցի» = ակնոցներու. «Թուղթեր» = քուղթ:

ՀՐԱՀԱՆԳ 194.— Գտէք թէ հետեւեալ գոյականներէն որո՞նց վրայ «ի» մասնիկը աւելցուած է, եւ որոնց վրայ չէ՛ աւելցուած: Օրինակ. «Հացի» — աւելցուած է. բարը «Հաց» է: «Շուքի» — չէ աւելցուած, բարը «Շուքի» է:

Հացի, շոգի, քոփի, մանուկի, ոսկի, գօտի, ոտքի, ձեռքի, հոգի, մորթի, սրբի, քուղթի, նաւակի, դասարանի, մատանի, դրացի:

ՀՐԱՀԱՆԳ 195.— Գտէք թէ հետեւեալ գոյականներէն որո՞նց վրայ «ու» մասնիկը աւելցուած է, եւ որոնց վրայ չէ՛ աւելցուած: Օրինակ. «կատու» — չէ աւելցուած. բառը «կատու» է: «Գիրքերու» — աւելցուած է. բառը «գիրքեր» է:

կատու, գիրքերու, մեղու, աքոռներու, նաւերու, տուներու, կլու, բու, շուներու, փողոցներու, աշակերտներու:

ՀՐԱՀԱՆԳ 196.— Գտէք թէ հետեւեալ բառերէն որո՞նց վրայ «է» կամ «ով» աւելցուած է, եւ որոնց վրայ չէ՛ աւելցուած:

Գաշտէ, վահէ, մահէ, դպրոցներէ, Շաֆէ, բագէ, աւագէ: Միտքով, ծով, մկրատով, հով, գրիչով, դրամներով:

ՀՐԱՀԱՆԳ 197.— Գտէք հետեւեալ հոլովուած գոյականներուն ուղղական-հայցական հոլովը: Օրինակ. «Քաղաքէ» = քաղաք-է. Ուղղական-հայցականն է «քաղաք»: «Տուներու» = տուն-եր-ու. Ուղղական-հայցականն է «տուներ»:

Քաղաքէ, տուներու, գօտիի, մելամով, ծաղիկի, օճերու, աղօթքով, վահէէ, բառերով, դրամով, գորգի, հանրակառքերէ, անունի:

ՀՐԱՀԱՆԳ 198.— Գծիկներով դատեցէք հետեւեալ գոյականներուն յոգնակիի մասնիկը եւ հոլովի նշանը: Օրինակ. «Գնդակներու» = գնդակ-ներ-ու:

Գնդակներու, երագներով, մուկերու, տուներու, աշխարհներէ, պուպրիկներու, ձիերով, կատուներէ, պատասխաններու, գիւղերէ:

32.— Ս, դ, ն եւ ը գիրքերը կը կոչուին յօդ, երբ աւելցուած են բառերու վրայ:

Օրինակ. Մայր — մայրս, գլուխ — գլուխդ, կատու — կատուն, ռետիններ — ռետինները:

ՀՐԱՀԱՆԳ 199.— Մէկական յօդ աւելցուցէք հրահանգ 197-ի գոյականներուն վրայ:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.— Գոյականի մը վրայ կարելի է աւելցնել երեք բան, թիւ («եր» կամ «ներ»), հոլով («ի», «է», «ով» կամ «ու») եւ յօդ («ս», «դ», «ն» կամ «ը»): Օրինակ. Ընկեր, ընկեր-ներ, ընկեր-ներ-ու, ընկեր-ներ-ու-դ:

ՀՐԱՀԱՆԳ 200.— Գտէք եւ գծիկներով դատեցէք հետեւեալ գոյականներուն վրայ աւելցուած յոգնակիի մասնիկները, հոլովի մասնիկները եւ յօդերը: Օրինակ. Զեռքերովս — ձեռք-եր-ով-ս:

Զեռքերովս, պարտէզներէն, պտուղները, դաշտերուն, քարերովդ, գնդիկներուս, բակերը, գոգնոցներդ, պայուսակներուդ:

ՀՐԱՀԱՆԳ 201.— Ըսէք «Ժիրայրին Կօշիկները» գրութեան գոյականներուն տեսակը, թիւը, հոլովը (եւ յօդը՝ եթէ կայ): Օրինակ. «Ժիրայրին» = Յատուկ անուն, եղակի, սեռական-տրական հոլով, «ն» յօդ:

ՀՐԱՀԱՆԳ 202.— Հետեւեալ բայերուն առջեւ մէկական յարմար գոյական դրէք եւ փոքր խօսքեր կազմեցէք: Օրինակ.

«Քննեց» — «Թիշկը քննեց հիւանդը»: Յետոյ ըսէք գոյականներուն հոլովը:

Քննեց, կ'ապրին, երգեցին, պիտի յաղթեն, կը խնդային:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ի՞նչ կը նշանակէ «եռլովի»: Քանի՞ հատ են հոլովները: Որո՞նք են յօդերը:

ԳՐԱԽՈՐ ՊԱՐՑԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՀՐԱՀԱՆԳ 203.— Գտէք հետեւեալ գոյականներուն 1) տեսակը, 2) թիւը, 3) հոլովը եւ 4) յօդը (եթէ ունին): Օրինակ. «Կատունները» = հասարակ անուն, յոգնակի, ուղղական-հայցական հոլով, «ը» յօդ:


Կատունները, աշակերտներուն, մեղուն, Երուանդին, տանիքէն, վահէ, գիրքերու, ձեռքովս, գաւազաններդ, գօտիիս, Հալէպէն, բանալի, հողի, անդունդ, գարուն, աղիւս, հացերը:

Տ Է Ր - Բ Ա Յ Ի

ՀՐԱՀԱՆԳ 204.— Ըսէք թէ ո՛վ կ'ընէ հետեւեալ գործերը: Օրինակ. «—դասը կը բացատրէ». «Ուսուցիչը դասը կը բացատրէ»:

— դասը կը բացատրէ: — կը ճննէ հիւանդները: — դեղ կը ծախէ: — պատարագ կ'ընէ: — պատերազմի կ'երթայ: — թռչուն կ'որսայ: — ձուկ կը բռնէ: — դաս կը սորվի: — հողը կը հերկէ: — կը հսկէ: — մեղր կը շիմէ: — մուկ կը բռնէ: — կը հաջէ: — խնձոր կու տայ: — կը լուսաւորէ երկիրը:

ՀՐԱՀԱՆԳ 205.— Դիտեցէք հետեւեալ նկարները, կարդացէք անոնց տակ գրուածները, եւ տեսէք թէ մեր շնիկը ի՞նչ կ'ընէ ամէն-մէկ նկարի մէջ:



Մեր Շնիկը Ծառը դուլխին վրայ կարկանդակս
կը մագրցի կը կենայ կ'ուտէ

33.— Երբ մէկը բան մը կ'ընէ՝ կ'ըսենք թէ ան տէր-բայի է:

Օրինակ. «Շնիկ»ը տէր-բայի է, որովհետեւ բան մը կ'ընէ (կը մագրցի, կը կենայ, կ'ուտէ):

ՀՐԱՀԱՆԳ 206.— Դիտեցէք հետեւեալ նկարները, կարդացէք անոնց տակ գրուածները, եւ գտէք թէ ի՞նչ կ'ընէ գործաւորը ամէն-մէկ նկարի մէջ:



ԳՈՐԾԱՒՈՐԸ

բաճկոնը ճակատը ջուր
.....

(Գործաւորը տէր-բայի է, որովհետեւ բան մը կ'ընէ — կը հանէ, կը սրբէ, կը խմէ):

|| ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.— Տէր-բային կ'ըսենք նաեւ եմբակայ:

ՀՐԱՀԱՆԳ 207.— Հետեւեալ դոյականները տէր-բայի ըրէք մէկական խօսքի մէջ. (այսինքն՝ ըսէք այնպիսի խօսքեր, ուր անոնք բան մը ընեն): Օրինակ. «Թռչնիկ» — «Մեր թռչնիկը միշտ կ'երգէ». (ի՞նչ կ'ընէ «թռչնիկը» — կ'երգէ):

Թռչնիկ, աշակերտ, դերձակ, արեւ, մագոզրծ, կատու, սափ-րիչ:

34.— Տէր-բային կապուած կ'ըլլայ բայի մը: Ամէն բայ տէր-բայի կ'ունենայ:

Օրինակ. Երբ ըսենք «Հայրս նամակ գրեց», «հայրս» տէր-բային է «գրեց» բային. (Ո՛վ գրեց, — հայրս):

ՀՐԱՀԱՆԳ 208.— Կարդացէ՛ք հետեւեալ խօսքերը, գտէ՛ք անոնց բայերը, եւ յետոյ գտէ՛ք իւրաքանչիւր բայի տէր-բային: Օրինակ. «Հիւանդը դեղ խմեց». «խմեց» = բայ. ո՛վ խմեց՝ «հիւանդը». հիւանդը = տէր-բայի «խմեց» բային:

Հիւանդը դեղ խմեց: Մօրաֆոյրս տանձ պիտի՛ քաղէ պարտեզէն: Մեր փիսիկը միս կը գողնայ: Փոֆր ֆոյրս յաճախ կը ժպտէր: Անձրեւը քրջեց հագուստներս: Զօրաւոր հովը քոցուց գլխարկս: Այս դանակը մատս կտրեց: Ան իր մատիտը կը կոթնցնէ ամէն շաբաթ: Ինք օգնեց ինծի: Քոյրս նկարիչ պիտի ըլլայ:

35.— Եզակի բայի մը տէր-բային կ'ըլլայ եզակի, յոգնակի բայի մը տէր բային կ'ըլլայ յոգնակի:

Օրինակ. «Հիւանդը թիչ առաջ դեղ խմեց»: «Հիւանդները թիչ առաջ դեղ խմեցին»:

ՀՐԱՀԱՆԳ 209.— Մէկական տէր-բայի տուէք հետեւեալ բայերուն: Օրինակ. «Կը խօսի» — «Ընկերս կը խօսի». «Կը խօսին» — «Ընկերներս կը խօսին»:

Կը խօսի, կը խօսին, մլաւեց, կը հաջեմ, կը սոգգայ, կ'երգէ, կը մայեմ, կը մայէ, հագացին, պիտի հագայ, պիտի առողջանան:

ՀՐԱՀԱՆԳ 210.— Գտէ՛ք հետեւեալ խօսքերուն բայերն ու տէր-բայինները եւ զանոնք յոգնակի ըրէ՛ք: Օրինակ. «Ան դասը կը կարդար բարձրաձայն» — «Անոնք դասը կը կարդային բարձրաձայն»:

Ան դասը կը կարդար բարձրաձայն: Զինուորը պատերազմի ճակատ մեկնեցաւ: Աստղը կը փայլէր երկինքին մէջ: Մեր դրացին մեզ շատ կը սիրէ: Դուն գիս կը ճանչնա՞ս: Ինք հո՞ս պիտի բնակի: Ես պարտեքս վնարեցի: Այս մեծ դուռը յանկարծ բացուեցաւ: Զամի՛չ պիտի գնէ եղբայրս:

ՀՐԱՀԱՆԳ 211.— Գտէ՛ք հետեւեալ խօսքերուն բայերն ու տէր-բայինները եւ զանոնք եզակի ըրէ՛ք: Օրինակ. «Ծիծեռնակները դարնան վերադարձան» — «Ծիծեռնակը դարնան վերադարձաւ»:

Ծիծեռնակները զարնան վերադարձան: Աստղերը կը փայլէին երկինքին մէջ: Միւս աշակերտները եկեղեցի պիտի երթան այսօր: Անոնք այս տունը կը բնակին: Դուք ինչո՞ւ ջուրը փողոց քափեցիք: Իր կերակուրները շատ տաք էին: Մենք ամբողջ օրը պտուտեցանք անտառներուն մէջ: Մօրս ձեռքը համբուրեցին փոֆր ֆոյրերս:

ՀՐԱՀԱՆԳ 212.— Հետեւեալ բայերուն երկուքական տէր-բայի տուէք: Օրինակ. «Վազեցին» — «Քոյրս» եւ «եղբայրս» վազեցին:

Վազեցին, կը խօսակցէին, կը մսին, մեկնեցան, առողջացան, գիրցան, կոտրեցան, կ'ուշանան, պիտի պատժուին, մաշեցան:

ՀՐԱՀԱՆԳ 213.— Հետեւեալ խօսքերէն ամէն մէկը ունի երկու տէր-բայի: Գտէ՛ք բայերը. յետոյ բայերուն վրայ ըրէ՛ք «որոնք» հարցումը եւ գտէ՛ք երկու տէր-բայինները: Օրինակ. «Սոնիկն ու Սեդեկը ծաղիկ հաւաքեցին». բայն է «հաւաքեցին». որոնք հաւաքեցին — Սոնիկն ու Սեդեկը. «Սոնիկն» ու «Սեդեկը» տէր-բայիններն են «հաւաքեցին» բային:

Սոնիկն ու Սեդեկը ծաղիկ հաւաքեցին: Շունն ու կատուն մեզի հետ կ'ապրին: Ինք եւ անոնք մոյլ գիրքերը պիտի կարդան: Գրող պիտի ըլլան Հրաչն ու Գեղամը: Շահանն ու ան ծառ մագլցեցան: Դէպի ծով կը հոսին գետերն ու առուները: Հաւերն ու աղաւնիները կուտ կը փնտռէին հողին մէջէն: Ինք եւ ան հանելուկներ

կը լուծէին: Աշակերտներն ու աշակերտուհիները ուրախ էին: Արեւն ու լուսինը կը լուսաւորեն մեզ: Գնդակներս ու գնդիկներս կորսուեցան:

36.— Երբ բառ մը տէր-բայի է՝ կ'ըսենք թէ ուղղական հոլով է. («ուղղական-հայցական» չենք ըսեր):

Օրինակ. երբ ըսենք. Սոնիկը վագեց, «Սոնիկը» բառը տէր-բայի է, (ո՛վ վագեց — Սոնիկը): Ուրեմն «Սոնիկը» բառը ուղղական հոլով է:

ՀՐԱՀԱՆԳ 214.— Գտէք հետեւեալ խօսքերուն բայերն ու տէր-բայիները. յետոյ ըսէք տէր-բայիներուն Տեսակը, Թիւը, Հոլովը եւ Յօդը (եթէ կայ): Օրինակ. «Սոնիկը դուրս վագեց». վագեց = բայ. Սոնիկը = Յատուկ անուն, եղակի, ուղղական հոլով տէր-բայի «վագեց» բային, «ը» յօդ:

Սոնիկը դուրս վագեց: Օշարակ կը խմէին հիւրերը: Բաժակը պիտի կոտրի շուտով: Երկիրը կը դառնայ Արեւին շուրջ: Բոլոր ծաղիկներն ալ թոռմեցան: Մեծ եղբայրս կը ջրէ մեր ծաղիկները: Ատրիսէն աշխատասէր է: Տուփին մէջ նկար մը պահեց Շուշիկը:

ՀՐԱՀԱՆԳ 215.— Գտէք նախորդ հրահանգին բայերուն Անբերելոյթը, Խումբը, Ժամանակը, Դէմքը եւ Թիւը:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ի՞նչ է տէր բային. որո՞ւն կապուած կ'ըլլայ տէր-բային: Երբ բառ մը տէր-բայի ըլլայ՝ ի՞նչ հոլով կ'ունենայ:

ԳՐԱԽՈՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՀՐԱՀԱՆԳ 216.— Գտէք հետեւեալ խօսքերուն բայերն ու տէր-բայիները. յետոյ ըսէք բայերուն Անբերելոյթը, Խումբը, Ժամանակը, Դէմքը եւ Թիւը: Ապա ըսէք տէր-բայիներուն Տեսակը, Թիւը, Հոլովը, եւ Յօդը (եթէ կայ):

Այս շունը ոսկոր մը կը կրծէր: Արփրպին պայուսակը կոտրեցաւ երէկ: Ռաֆֆիկն ու Ալեքը շատ լաւ կը լողան: Ուշ պիտի մեկնին հիւրերը: Շողիկին քոյրը օշարակ պիտի խմէր: Օդը ցուրտ էր:


Ա Մ Ա Կ Ա Ն

37.— Ածականը բառ մըն է, որ կը դրուի գոյականին առջեւը եւ ցոյց կու տայ գոյականին ինչպէս ըլլալը:

Օրինակ. երբ ըսենք «լուրջ աշակերտ», «լուրջ» բառը ցոյց կու տայ «աշակերտ»ին ինչպէս ըլլալը: Ինչպիսի՜ աշակերտ՝ «լուրջ»: Լուրջ բառը ածական է:

Երբ ըսենք «կարմիր ծաղիկ», «կարմիր» բառը ցոյց կու տայ «ծաղիկ»ին ինչպէս ըլլալը: Ինչպիսի՜ ծաղիկ՝ «կարմիր». կարմիր բառը ածական է:

ՀՐԱՀԱՆԳ 217.— Կարդացէք «աշակերտ» եւ «ծաղիկ» դասականներուն ածականները. յետոյ գո՛ւրջ ալ երեքական ածական տուէք այդ երկու գոյականներուն:



ՄԱՆՕԹՈՒԹԻՒՆ.— Ածականը միշտ կապուած կ'ըլլայ գոյականին:

ՀՐԱՀԱՆԳ 218.— Հետեւեալ գոյականներուն առջեւ մէկական ածական դրէք: Օրինակ. Գիրք — Մանր գիրք:

Գիրք, երկինք, շէնք, դպրոց, զինուոր, ձի, փամբայ, քաղաք, ընկեր, անտառ, դուռ, եկեղեցի, դասարան, վարդ, հսկիչ:

ՀՐԱՀԱՆԳ 219.— Հետեւեալ ածականներուն ետեւը մէկական գոյական դրէք: Օրինակ. Քաջ — քաջ զինուոր:

Քաջ, աշխատատէր, ազատ, անգութ, տաք, սիրելի, անկեղծ, ծռլլ, լալկան, գեղեցիկ, կանաչ, ծուռ, վախկտտ, ստախոս, ցեխոտ, կարմիր, քառակուսի, բարձր:

ՀՐԱՀԱՆԳ 220.— Գտէք թէ հետեւեալ գոյք բառերէն որո՞նք ածական են եւ որո՞նք՝ գոյական: Օրինակ. «Գնդակ» եւ «նոր»: «Գնդակ» բառը գոյական է, որովհետեւ «գնդակ» անունով բան մը կա՛յ աշխարհի վրայ. «նոր» բառը ածական է, որովհետեւ երբ զայն ղենք գոյականի մը առջեւը՝ ցոյց կու տայ անոր ինչպէս ըլլաւ. «ինչպիսի՛ գնդակ» — նոր գնդակ:

Գնդակ — նոր, հին — հագուստ, քաց — լաք, առողջ — մարդ, տուփ — պզտիկ, մոմ — բարակ, տգեղ — մարդ, տաք — արեւ, աշակերտ — շատախօս, հայրենիք — ազատ, կօշիկ — սըր-նագոյն:

ՀՐԱՀԱՆԳ 221.— Հետեւեալ գոյականներուն առջեւ երեքական հատ յարմարող ածական դրէք: Օրինակ. «Ծաղիկ» — Գեղեցիկ, անուշահոտ եւ մերմակ ծաղիկ:

Ծաղիկ, պարտէզ, կօշիկ, գնդակ, պուպրիկ, աչք, ընկեր:

ՀՐԱՀԱՆԳ 222.— Գտէք հետեւեալ խօսքերուն մէջ գտնուող գոյականները. յետոյ գտէք այդ գոյականներուն կապուած ածականները:

Սեւ փիսիկը եւ մերմակ շնիկը կռուրտեցան: Չար Արփիկը փոքր քոյրս կը ծեծէր: Խելացի աշակերտները կ'աշխատին: Մաքուր, աշխատատէր եւ քաջ ազգիկներ պիտի ըլլան մեծ քոյրերդ: Լուսաւոր սեմեակներ եւ փայլուն գրասեղաններ պիտի ունենայ նոր դըպրոցը: Ճարպիկ կատուները խաչաք մուկեր կը բռնեն:

ՀՐԱՀԱՆԳ 223.— Գտէք նախորդ հրահանգին խօսքերուն բայերն ու տէր-բայիները:

ՀՐԱՀԱՆԳ 224.— Ըսէք Հրահանգ 222-ի բայերուն Աներեւոյթը, Խումբը, Ժամանակը, Դէմքը եւ Թիւը:

ՀՐԱՀԱՆԳ 225.— Ըսէք Հրահանգ 222-ի տէր-բայիներուն 1) Տեսակը (յատուկ թէ հասարակ ըլլալը), 2) Թիւը (եզակի՞ թէ յոգնակի ըլլալը), 3) Հոլովը, 4) Ո՛ր բային կապուած ըլլալը եւ 5) Յօդը (եթէ ունի): Օրինակ. «Փիսիկը» = 1) Հասարակ անուն, 2) Եզակի, 3) Ուղղական հոլով, 4) Տէր-բայի «կռուրտեցան» բային, 5) «ը» յօդ:

ՀՐԱՀԱՆԳ 226.— Գտէք թէ հետեւեալ բառերը բա՞յ, գոյական՞ թէ ածական են: Օրինակ. «Կը խօսէր» բայ է, բան մը ընել ցոյց կու տայ: «Կոկիկ» ածական է, — կրնանք զայն գոյականի մը հետ գործածել, — «կոկիկ աշակերտ»: «Աշակերտ» գոյական է, որովհետեւ գոյութիւն ունեցող բանի մը անունն է:

Կը խօսէր, կոկիկ, աշակերտ, պայծառ, հրեց, պիտի կապէի, դերձան, կերպաս, կարծր, լոնցէ՛ք, քար, քարոտ, քարկոծել, ժպիտ, ժպտուն, ժպտիլ, խնդալ, բերան, կը ծամէք, մանիշակագոյն:

ՀՐԱՀԱՆԳ 227.— Երկու խումբերուն մէջէն զատեցէք եւ քով-քովի դրէք այն գոյականն ու ածականը, որոնք իրարու կը յարմարին: Օրինակ. «Կանաչ տերեւ»:

Ա.— Կանաչ, սրածայր, մաքուր, նեղ, գունաւոր, սիրելի:


Բ.— Ճամբայ, քիթեմիկ, ընկեր, քաշկիմակ, մատիտ, տերեւ:

ԳՐԱՆՈՐ ԳՍՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՀԱՆԳ 228.— «Ամառը» գրութեան մէջ կայ տասը հատ ածական. գտէք զանոնք եւ ըսէք թէ ո՛ր գոյականներուն կապուած են:

ՀՐԱՀԱՆԳ 229.— «Ամառը» գրութեան մէջ կայ 28 հատ բայ. գտէք զանոնք: Յետոյ գտէք անոնց տէր-բայիները:

ՀՐԱՀԱՆԳ 230.— Գտէք «Ամառը» գրութեան գոյականները եւ ըսէք անոնց հոլովը:




Ա Մ Ա Ռ Ը

Երբ փակուին դպրոցները՝ մենք լեռ կ'ելլենք: Հայրիկս ու մայրիկս ընդարձակ տուն մը կը վարձեն լեռնէն. խոշոր ինքնաշարժ մը կը փոխադրէ մեր առարկաները: Եղբայրս ու ես լեռ կը տանինք մեր գիրքերն ու խաղալիկները:

Եղբայրս դաշտ կ'երթայ եւ «պասեք-պու» կը խաղայ ընկերներով. տունը կը գրադի խաղալիկներով. սիրուն նաւակներ, գոյնզգոյն գնդակներ, աղուորիկ ձիեր, փայլուն ինքնաշարժներ ունի եղբայրս: Ե՛ս ալ ունիմ գեղեցիկ խաղալիկներ: Երբ ոչը գովանայ՝ կ'առնեմ կանաչ մայքանիս ու կ'իջնեմ պարտեզ: Արփիկն ու Սոնիկն ալ կու գան. Սոնիկը շատ կը սիրէ իմ մայքանիս. Արփիկը կ'ախորժի նոր պուպրիկէս եւ պատկերագարդ գիրքերէս:

Երբ յոգնիմք մենք՝ կը նստիմք աւազանին եզերքը եւ կը պիտենք ձկնիկները: Արփիկը, Սոնիկն ու ես հացի փշուրներ կը մետենք ձկնիկներուն: Ձկնիկները կը յարձակին փշուրներուն վրայ եւ իրարու թերանէն կը խլեն գամոնք:

Իսկ մտեալ հայրս երբեմն մեզ ձիւնի կը տանի: Չիւնամարդ կը շինեմ ես. ձիւնագնդակ կը խաղան ընկերներս: Հայրս մեզ կը դիտէ եւ կ'ուրախանայ:



Գառ

Էջ

1.— ԲԱՆԹ	3
2.— ԳԻՐ	7
3.— ԿԷՏԵՐ	11
4.— ՆՇԱՆՆԵՐ	14
5.— ԳԼԽԱԳԻՐ	17
6.— ՉԱՆԿ	19
7.— ՏԻՂԱԳԱՐԶ	22
8.— ՀՈՒՄԱՆԻԾ ԵՎ ՀԱՍԱՆԻԾ	25
9.— ԲԱՑ	28
10.— ԲԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ	33
11.— ԲԱՅԻՆ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ	36
12.— ԲԱՅԻՆ ԳԷՄԲԸ	40
13.— ԲԱՅԻՆ ԹԻԻԸ	43
14.— ԲԱՅԻՆ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ	47
15.— ԲԱՅԻՆ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ	51
16.— «ԸԼԱՍ» ԲԱՅԸ	56
17.— ԳՈՅԱԿԱՆ	60
18.— ԳՈՅԱԿԱՆԻՆ ԹԻԻԸ	64
19.— ԳՈՅԱԿԱՆԻՆ ՀՈՒՈՎԸ ԵՎ ՅՕԴԸ	68
20.— ՏԷՐ-ԲԱՅԻ	72
21.— ԱԾԱԿԱՆ	77

ՀԵՂԻՆԱԿԻՆ ԳՈՐԾԵՐԸ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, Նախապատրաստական

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, Տարրական

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, Միջին-Բարձրագույն

ԳՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ԻՄ ԳԻՐՔԱՆ, Ա. (Երկլեզու)

ԻՄ ԳԻՐՔԱՆ, Բ.

ԻՄ ԳԻՏՔԱՆ, Գ.

ZAREH MELKONIAN

42987 Paseo Padre Pkwy.

Fremont, California 94539

(415) 659-1237